своё пребывание на Земле подвигами и самоотверженным служением Отечеству. Сегодня мир диктует нам очень жесткие правила жизни. Сохранив свою историческую память и передав ее грядущим поколениям, мы выживем как народ. Отказавшись от собственного исторического наследия, мы станем на путь угасания национального самосознания и погрузимся в пучину хаоса и деградации по печальному примеру украинского народа, драма которого разыгрывается у нас на глазах. Какая же главная патриотическая цель стоит сегодня перед нами как наследниками Великой Победы? Сегодня наша главная цель – это не только пассивная память о нашей героической истории, но и её активная защита от наглых и лживых нападок реакционного западного сообщества, стремящегося принизить историческую роль Советского и современного Российского государства в мировой истории человечества.

На пути реализации этой цели нам необходимо объединиться с нашими друзьями и сородичами из других стран и донести до населения всех государств историческую правду, потому что лишь общими усилиями со всеми прогрессивными силами планеты мы сможем защитить свою государственность и историческое наследие от агрессивных происков мирового империализма.

В годы войны народы страны Советов жили согласно лозунгу: «Все на защиту социалистического Отечества!», сегодня жизнь вынуждает нас трансформировать этот лозунг в новый: «Все на защиту исторической памяти о немеркнувшем подвиге наших предков!».

Арсен МЕЛИК-МИРЗАБЕКЯН.

OSTKRAFT: Стала известна фамилия будущего премьер-министра России

В апреле бывший министр финансов России Алексей Кудрин, возглавлявший это ведомство, что немаловажно, почти 11 лет – с 18 мая 2000 года по 26 сентября 2011 года, начал возвращение во власть.

Аналитический центр OSTKRAFT сообщает, что назначение А. Кудрина заместителем председателя Экономического совета при президенте России означает как минимум несколько важных событий вокруг этого нового «теневое правительство» РФ:

1) Алексей Кудрин после долгого периода затихия практически вернул себе все свое бывшее влияние, а также аппаратные возможности. Теперь Кудрин наберет полностью свою команду профессионалов, которые в течение максимум полугода смогут составить конкуренцию команде Медведева по всем стратегическим направлениям.

2) Кудрин становится «смотрящим» по всей экономической политике страны от президента, или «теневым» премьер-министром.

3) выдвижение Кудрина, как ни покажется кому-то это парадоксальным, становится еще одним свидетельством того, что Владимир Путин не собирается на следующий избирательный цикл опираться на старую команду кадров.



4) назначением Кудрина созданы все предпосылки для появления в России после выборов в Госдуму нового премьер-министра. А правительство, даже с Медведевым-Дворковичем во главе, станет исключительно инструментом проведения экономической политики Кудрина.

Խորեն ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՅՍՊԻՍԻՆ ՏԵՍԱ ՆՐԱՆ

ՏԻԵՋԵՐՔԻ ճոճքում պատկած միտք է անուամ սիրտս լուռ,
Թե՛ զվարթուն ինչքեր տեսավ, ի՛նչ մորմոքներ ու մրմուռ...
Ո՛րն էր ավել, ո՛րն էր պակաս լույս Անհայտը կիսմանս,
Մակայն սրտիս հենց կենտրոնում լուռ քնած է հիմա նա:

ՀՐԱԶՅԱ ՍԱՐՈՒԽԱՆ



... Գնաց դեպի Անհունը՝ մեր սրտում թողնելով մորմոք ու մրմուռ,
աշխարհին թողնելով Պոեզիա...



... Բանաստեղծ, ում պոեզիան սնվում էր ազգային ու համաշխարհային մշակույթի ակունքներից, ով անդադար ինքնադրոնման մեջ էր, կեցության և մարդու առեղծվածի փնտրտությունում, աշխարհին իր հոգուց և իրեն աշխարհից չբաժանող փնտրտուք, քանզի միաձուլվ էին ու փոխներթափանցող իր անձի և աշխարհի սահմանները: Բանաստեղծ, որ, բողբոջյան բնորոշմամբ, անհայտի խորքը սուզվելով՝ որոնում էր նորը, ում խոսքն օժտված էր պատկերային հարուստ և ճկուն համակարգով, բանաստեղծի փոխաբերականությամբ, մակդիրի դիպուկությամբ ու գյուտարարի ինքնատիպությամբ, ալիտերացիաների ու աստնանանների

անբռնագրես խաղով, աֆորիստիկ մտածողությամբ (վկան՝ խորախորհուրդ իր քառյակները նաև) ու ներհունությամբ, ազգային և համաշխարհային զարմանահրաշ սինթեզով, մտքի և հույզի ներդաշնակ համաձուլվածքով: Խոսքի վարպետ՝ իր ուրույն լեզվատոճով, ժողովրդական բառ ու բանի հրաշալի իմացությամբ ու նույնքան հրաշալի կիրառումով: Բառաստեղծ՝ նորաբանությունների հմուտ արարող: Վերջապես՝ անգուգական թարգմանիչ:

... Մարդ, որ օժտված էր համաշխարհային գրականության ու արվեստի խոր իմացությամբ, գեղագետի հղկված ճաշակով, սեփական ստեղծագործության հանդեպ ահավոր պահանջկոտությամբ և բժախնդրությամբ իր գրած ամեն մի բառ ու տողի նկատմամբ: Իր վարքը արբեմովի բռնեմիկ, անկանոն կենցաղից մինչև ասկետի սակավապետ, ժուժկալ համեստություն ու ներամփոփ կենսակերպ, և նախանձելի մաքրություն ու կարգուկանոն՝ հատկապես իր աշխատասեղանում:

Այսպիսին տեսա ՀՐԱԶՅԱ ՍԱՐՈՒԽԻՄԱՆ ֆենոմենը, ՀՐԱԶՅԱ ՍԱՐՈՒԽԻՄԱՆ բանաստեղծին ու մարդուն, մեր ՀՐԱԶԻՆ մեր անցած հրաշք օրերին:

... Եվ ցավս այսօր է խեղդում, և կարոտն է խեղդելու վաղը...
Հրաչյա Սարուխանը գնաց դեպի Անհունը...



ՀՐԱԶՅԱ ՍԱՐՈՒԽԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

Դու իմ հետադարձ հասցեն ես միակ
Եվ իմ եզակի ճակատագիրը,
Իմ բաց երգերը, իմ վերքերը փակ,
Իմ հիշատակաց միակ Երկիրը...
Անկրկնակոչիկ Համապատմության
Սայթաքումները մեզ աղավաղել

Եվ թաց երգերս փակ վերքերիս մեջ
Սատանայաբար փորձել են թաղել,
Որպեսզի դառնամ թափառող ծրար
Չունենամ նույնիսկ հետադարձ հասցե,
Բայց մենք վերստին փարվել ենք իրար
Ու հուսաբանել Տեր մի՛ արասցե...
Դու իմ հետադարձ հասցեն ես միակ,
Իմ անկրկնելի ճակատագիրը,
Իմ բաց երգերը, իմ վերքերը փակ,
Իմ հիշատակաց միակ Երկիրը:

ՀԱՆԳՐՎԱՆԻ ԿԱՅՔ

Իրիկուն էր: Մութ էր մաղում:
Ինքնամոռաց հուշ էի ես:
Համաշխարհի մթնշաղում
Շրջում էի ուրուի պես:
Ու տեղ հասա: Չայն անձանդ
Արձագանքն էր համաշխարհի.
– Բո՛ւ փոխարեն, ա՛յ յո՛ հանցանող,
Թող մորմոքդ ապաշխարի...
Գիշերն, ասես, դեմք էր մի նեղ՝
Աչքը հառած իմ մորմոքին...
– Ա՛յ, մարմինն էլ անմեղ լինե՛ր,
Մեն-միայնակ մեղք է հոգին, –

120

Զիտրքան էլ բառեր ընտրում,
Չի ամոքվում նա բառերով, –
Հանգրվանի կայք է փնտրում
Դեզերամիտ թափառելով:

ՍԹԱՓ ԿԱՐՈՏ

Չէ՛, անհարմար չէ հարմար ապրելը.
Կյանքից եմ միայն փոքր-ինչ ամաչում:
Հոգիս կարկատող ասեղն ու թելը
Բացարձակապես ինձ չեն ճանաչում:
Գնում եմ, թողած իրերն անձնական,
Որ մի օր պիտի գանգատվեն բախտից...
Թափառանալին սփոփանքն անգամ
Չի փրկի նրանց հին կարոտախտից:
Բամբասանքների պարսը թունաքիստ
Բզգում է նաև շուրջը դիակի...
Վերք ունի նույնիսկ զգեստը հագին,
Եվ փառքի դափնին վերքն այդ չի փակի:
Իմ որբուկ գրի չ, անտերունչ իմ թոռնիկ,
Ով է խորթ փոշին ձեզից վանելու, –
Այն իմ Ձեռագիրը, ետմահու պանդուխտ,
Առանց իմ Աջի ի նչ ես անելու...
Կեցցե և կենարար մարտեղ հյուրերը:
Կյանքից եմ միայն փոքր-ինչ ամաչում:
Հոգիս կարկատող ասեղն ու թելը
Բացարձակապես ինձ չեն ճանաչում:

ԱՓՍՈՍԱՆՔԻ ԵՐԳ

Հագա՛ր երանի իմ այն օրերին,
Երբ չգիտեի բառը Տիեզերք,
Երբ անծանոթ էր ոլորտը վերին,
Երբ չէի տեսել կորուստներ ու վերք,
Երբ Ձմեռ պապի հրաշք մորուքին
Չյունն էր փայլվում երազանման,
Եվ Չյունանուշը ձմեռվա բուքին
Տոնածառի էր ուղեկցում նրան...
Այն, Ձմեռն պապի, չճերացող հուշ,
Դու նույնն ես էլի, ճերմակել եմ ես, –
Իմ այս մորուքով, ախ իմ Չյունանուշ,
Անհեթեթորեն պապ եմ գալիս քեզ:
Ախր էլ ինչպե՛ս, ինչպե՛ս ս չափստամ,
Որ տվորել եմ բառը Տիեզերք...
Որպես տխրության թեթև մի հոսանք,
Շոյի ը տարիքս, ափսոսանքի երգ:

Անձրեն անցներ, ու մամուռը փայլեր պատին:
Մի թռչուն գար ու ժամերով պատին նստեր:
Ու աչքերում իրաներ պատկերն Արարատի...
Համբերություն և տուր թռչունին, Երկնային Տե՛ր:
Ու թռչունն այդ ամեն գիշեր դուրս կանչեր ինձ
Ու շնչար հայրենաբաղձ երգի խոսքեր:
Ու արյունս վե՛րք ի վերքո ճանաչեր ինձ:
Համբերություն և տուր արյանս, Երկնային Տե՛ր:
Ու թռչունն այդ երբ հեռանար, չարտասվեի:
Ու թռչունն այդ հեռանալիս լացը զսպեի:
Ու օրերը մեկի կ-մեկի կ ետ դարսվեին...
Համբերություն և տուր օրերին, Երկնային Տե՛ր:
Ու երևար նախնաշխարհի կենտրոնը վե՛ր:
Երկինքը՝ բառ, ու երկիրը՝ բառի ստվեր:
Ու լինեինք, չլինեինք թռչունն ու ես...
Համբերություն և համբերանքիդ, Երկնային Տե՛ր:

ՀԱՎԵՏ ՊԱՐՏԱՏՈՒ

Օ՛ անցյալիս պատկեր – ժառանգալի տեսքով,
Որպես մենամորմոք հանդիսատես
Խանդաղիտակով եմ խորքը նայում ես քո,
Չլինի թե անօգ խանդս ատես:
Ապշահարի աչքով նշմարում եմ հիմա

Այն ամենը, ինչ որ չէի տեսել.
Դափնիներից խորշոդ անփառունակ մի մահ
Եվ մահագարդ կյանքի մի հին տեսիլ:
Եվ տեսիլն այդ, զգված անփառունակ մահին,
Ինձ քաշում է դեպի անշարժություն,
Որ խոնջանամ գոնե քեզ նայելուս պահին...
– Օ ջանքերի հեզանք իմ շաշույթուն:
Մնջախաղի տեսքով անցյալիդ իմ պատկե՛ր,
Ոտնագնաց քունն եմ, ինչպես կայի...
ԵՐԿՆՔԻՆ ու ԵՐԿՐԻՆ՝ հագա՛ր ու մի պարտքեր, –
Այս կարճատև կյանքում ինչպե՛ս տ առալի:

ՄԱՐԿԱՆ ՏԵՍԻԼ

Հոգեվարքի այն պահն է հենց,
Երբ ոլորտից իր հեռամերձ
Հրաժեշտ է հղում Հոգին, –
Եվ անտարբեր ու անհաղորդ
Ուրուի պես արդեն աղոտ
Սգվորների խուլ մորմոքին,
Ես մարմնող Մարմինն իր այն,
Նրա ձայնն եմ լսում միայն
Եվ ճախրանք եմ միայն դիտում...
«Մնաս բարո՛վ, մարմին իմ հեզ,
Իմ վրիպյալ ողբերգ ու երգ, –
Մինչ անվրեպ մի հանդիպում»:

ՈՐՊԵՍ ՍՐՏԱԲՈՒՆ ՀՐԱԺԵՇՏԻ ՁՅՈՒՆ

Չորս չափուժներից կուշտ եմ լիաչափ,
Չե՛մ ավաղելու, օրհասը երբ գա,
Զի երկբայել են օրերն իմ հաճախ,
Քան հաճախակի եղել աներկբա, –
Զի մինչև անգամ կասկածել եմ, Տե՛ր,
Թե խաչչելության այն ցերեկը նույն
Արդյո՞ք գոհափառ գավակդ գիտեր
Ով է, որտեղից և ուր է գնում, –
Զի վարանամիտ որքան էլ ջանամ,
Ի՛նչ եմ անելու թառամելուց գատ,
Հո չե՛ս թողնելու՝ ինձ թշնամանամ –
Հարբեմ-շնանամ, դառնամ ելուզակ...
Հրաշագոծի՛ր՝ մաղվեմ ինքնակամ,
Որպես սրտաբուխ հրաժեշտի ձյուն,
Չորս չափուժներից
Չորս տախտակ անգամ
Հետս չտանեմ հավիտենություն:

Ծաղկաթերթերն արդեն թափվում են ցած.
Չյան պատրանք է անվերջ ձյուն անձմեռ...
Ի՛նչ տեսք ունի, տեսնես, թաքուն կեցած
Արտաժամանակյա բուն Անձը մեր,
Որ նիրհում է, պոետ, մեր մահից էլ անդին,
Փառքերի մեջ հանուր անմահության,
Հղանալով ընդհուպ իր մշտություն անդրին՝
Պատրանքների երկրում ծաղկի ու ձյան:

ՆԱԽՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Երբ Միտք էր միտքն իմ,
Միտքն իմ երբ ի նքն էր,
Երկինք էր միտքն իմ,
Ինքն իր երկինքն էր.
Երկինքն իր Մարմին,
Երկինքն իր Հոգի, –
Իր անիրական
Երկինքն իրոքի...

ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ

2015 թ. դեկտեմբերի 12-ին, Երևանում տեղի ունեցավ «Լուսավոր Հայաստան» կուսակցության հիմնադիր համագումարը: Այս իրադարձությունը առանձնանում էր նրանով, որ ի տարբերություն հայաստանյան քաղաքական ուժերի մեծ մասի «Լուսավոր Հայաստան»-ը քաղաքականություն է ներկայանում նոր դեմքերով, նոր գաղափարներով և որակապես նոր լուծումներով:

Հիմնադիր համագումարի ընթացքում, կուսակցության խորհրդի նախագահ ընտրվեց ԱԺ անկախ պատգամավոր **Էդմոն ՄԱՐԻՔՅԱՆԸ**: Կուսակցության խորհրդի կազմում ընդգրկված են գիտության, ձեռնարկ-գյուղատնտեսության, քաղաքացիական պայքարի բոլոր անցած ակտիվ և պայքարող քաղաքացիներ, որոնք, իրենց կարճատև հանրային գործունեության ընթացքում արդեն հասցրել են կուսակցի բավական մեծ և հաջողված փորձ:

Հիմնադրվելով 2015 թ. դեկտեմբերի 12-ին, «Լուսավոր Հայաստան» արդեն ակտիվ գործունեություն է ծավալում Հայաստանի ողջ տարածքում: Այս պահի դրությամբ, կուսակցությունն արդեն հիմնել է 5 տարածքային ստորաբաժանումներ Երևանում և մարզերում (Վանաձոր, Նոյեմբերյան, Միսիան և Արարատ), իսկ առաջիկայում կստեղծվեն ևս 3 ստորաբաժանումներ Հայաստանի տարբեր քաղաքներում:

«Լուսավոր Հայաստան»-ը գործելու է ընդդիմադիր դաշտում: Լինելով կրթված մասնագետների առաջադեմ թիվ, կուսակցությունն իր առջև խնդիր է դրել առողջացնել և արդիականացնել Հայաստանի քաղաքական համակարգը ստեղծելով նոր քաղաքական մշակույթ և առաջ բերելով կառավարման արդիական և արդյունավետ տեխնոլոգիաներ:

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը հանդես է գալիս քաղաքական սերնդափոխության պահանջով: Մակայն ոչ թե



գուտ կենսաբանական սերնդափոխություն, երբ հին սերնդի քաղաքական գործիչներին փոխարինում են նույն արժեքներն ու սկզբունքները դավանող երիտասարդ կադրեր, այլ քաղաքական որակյալ սերնդափոխություն, որը քաղաքական դաշտ կրեթի արմատապես տարբերվող արժեքային համակարգ ունեցող գործիչների օժտված նոր և մրցունակ գիտելիքներով, որոնք Հայաստանը կդարձնեն ոչ թե գոյատևող, այլ զարգացող պետություն:

Հայաստանում ստեղծվել է համակարգային անհավասարությունների դաշտ, որը պետությունը կանգնեցրել է սոցիալ-տնտեսական ճգնաժամի առջև: «Լուսավոր Հայաստան»-ի գլխավոր նպատակներից մեկը Հայաստանում հավասար հնարավորությունների միջավայր ստեղծելն է բիզնեսի, գիտության, քաղաքականության և մի շարք այլ բնագավառներում: Այս խնդիրների լուծման բանալին քաղաքական համակարգում է:

Կուսակցությունը պատրաստվում է ակտիվորեն մասնակցել առաջիկայում անցկացվելիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, մասնավորապես Հայաստանի 2-րդ և 3-րդ ամենամեծ քաղաքներում՝ Գյումրիում և Վանաձորում: Մա ևս մի կարևոր հանգամանք է, որով «Լուսավոր Հայաստան»-ը տարբերվում է մյուս ընդդիմադիր քաղաքական ուժերից, քանի որ վերջիններս գլխավորապես կենտրոնացել են նախագահական և խորհրդարանական ընտրությունների վրա և

անտեսել ՏԲՄ ընտրությունները, որտեղ մեծամասամբ հաղթել է իշխանությունը, իսկ հետո իր տեղական ռեսուրսներն օգտագործել համապետական ընտրությունների կեղծման համար:

«Լուսավոր Հայաստան»-ը որդեգրել է ֆինանսավորման թափանցիկ և ժամանակակից ժողովրդավարական մոդել: Կուսակցության ֆինանսավորումը կատարվում է երկու հիմնական աղբյուրներից՝ անդամավճարներ և դրամահայթայթման երեկույթներ, որին ներկա են գտնվում կուսակցության համակիրներն ու բոլոր նրանք, ովքեր ցանկանում են ներդրում կատարել «Լուսավոր Հայաստան»-ի գործունեության մեջ: Ներդրումներ կարելի է կատարել նաև էլեկտրոնային տարբերակով կուսակցության ինտերնետային կայքում: Ֆինանսական հոսքերի և ծախսերի ամբողջ գործընթացը թափանցիկ է և ներկայացվում է կուսակցության հրապարակային հաշվետվության միջոցով:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության նպատակն է Հայաստանը դարձնել 10 միլիոն հայերի երկիր, երբ աշխարհի ցանկացած ծայրում ապրող յուրաքանչյուր հայ կցանկանա իրեն նույնականացնել Հայաստանի Հանրապետության հետ Հայաստանը դիտելով իր անփոխարինելի և հզոր երաշխիքն ու թիկունքը համայն աշխարհում: Հայաստանը չպետք է լինի բեռ սփյուռքի ուսերին, Հայաստանը պետք է լինի հնարավորություն սփյուռքի համար: Դրա համար, նախ և առաջ, հարկավոր է կառուցել դինամիկ զարգացող և ամուր պետություն, որը հնարավոր է միայն ժամանակակից և մրցունակ գիտելիքներ ունեցող, պարկեշտ և մաքուր կենսագրությամբ անհատների ջանքերով, ովքեր հասարակության հետ կաշխատեն բաց, թափանցիկ և ազնիվ ճանապարհով:

ՍՈՐԱՑՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐ

Ճապոնացիները իրենց ողջ պատմության ընթացքում պահպանելու սերնդեսերնդ են փոխանցել այն գեղեցիկ ու հատկանշական արժեքները, որոնք բնութագրական են իրենց ժողովրդի ու պատմության համար: Յուրաքանչյուր անգամ անդրադառնալով ճապոնական մշակույթին, այս կամ այն ոլորտին համոզվում ենք, որ գեղեցիկի ճշմարիտ պահպանումը կախված է ժողովրդից:

=Քարի սովորություն=

Արցախյան գյուղերից մեկում մի շատ բարի սովորություն է պահպանվել: Երբ մեկի տանը մի որևէ առիթով սեղան է բացվում, չեն մոռանում աղբյուրներին, հրավիրում են գյուղի ամենաչքավոր մարդկանց ու տան անդամի պես պատվավոր տեղում նստեցնում, որ մարդն իրեն ընդունված, սիրված ու հարգված գգա:

Մրա գաղափարը պիտի համարենք.

– Եթե չգիտես ինչպես վարվել, վարվիր մարդկայնորեն: Փող հնչեցնելու, «փայ գցելու» փոխարեն բարձրացնել ու սիրենք մարդկանց, գուրգուրենք ու պատվով տանք գրկվածին: Զե որ նրանք էլ մեր Հոր գավակներն են, մեր եղբայրները, մեր քույրերը:

=Քրիստոնեական սովորական արարք=

«Ակլատիզ»

Մեծ Պատի առաջին օրվա կարևորագույն գործը Պատը խորհրդանշող «Ակլատիզ» կախելն է:

Պատից յոթ շաբաթ առաջ պապի տեսքով տիկնիկ է կարվում և դրվում տխի վրա: Մոխի վրա յոթ փետուր է խրվում և կախվում է պատից:

Փետուրները Պատի յոթ շաբաթներն են: Ամեն շաբաթվա վերջում հանվում է փետուրներից մեկը:

«Ակլատիզ»-ը կախելիս ասվում էր. «... շնորհավոր Մեծն Պատ, բարով հասանք Ձատիկը ուրախ սրտով, ցամաք աչքերով, պապին շնորհավորենք, տեսեք թևավորված ոտները կախ արեց մեր երդիկովը», ծանր-ծանր նստեց, բարով պապի բմբուլները պոկելով տկտրացնենք, ումբրը լորի պոչ շինենք (այսինքն՝ կյանքը լորի պոչին նման կարճացնենք), հետ աճենք, «գնա, քարափների տակին տապ տա»:

Հիշելով մանկության օրերը՝ Մոսե տառապանքներ էր անում:

– Մեր ժամանակ Պատի օրերին կովածները պիտի բարիչեին, թշնամությունը մեկ մեկի

նկատմամբ վերանում էր, հարսները տան բոլոր անկյունները մաքրում էին, էլ օրերին երգելու ու պարելու իրավունք ունեին միայն տղամարդիկ, աղջիկների ու հարսների համար էլ մեղք էր:

=Եկեղեցի մտնելիս կնոջ գլխաշոր կրելու իմաստը=

Համաձայն Մուրբ Գրքի՝ տղամարդը ստեղծված է Աստծո պատկերով և կերպարանքով: Նրա գլուխը Քրիստոսն է, ուստի նրա կյանքում անդրադարձնում է Աստծո փառքը, ուրվագծում է Քրիստոսին:

Կնոջ գլուխը տղամարդն է ամուսինը, ուստի նա էլ իր կյանքում պետք է անդրադարձնի իր ամուսնուն ուրվագծելով նրան: Տղամարդը եկեղեցում պետք է իր գլուխը բաց պահի, քանի որ աղոթքի պահին, պատարագի պահին իր մտքերն ու խոհերը պետք է բաց լինեն Աստծո առաջ, և ոչինչ չթաքցնի, այլ մաքուր սրտով կանգնի Աստծո առաջ: Կինը, ծանկտելով գլուխը, ազատորեն կանգնում է Աստծո առաջ, խոնարհությամբ որպես միայն Աստծուն նվիրված: Երբ կինը բաց գլխով է կանգնում Աստծո առաջ, նշանակում է նա չէ, այլ իր ամուսինն է կանգնած:

Ուստի գլխաշորը անհատականացնում է կնոջը Աստծո առաջ, այլ ոչ թե նսեմացնում:

Լևոն ԿՍՉԱՐՅԱՆ

«Հայ զինվորին արիություն եւ քաջություն չեմ ուզում մաղթել, քանի որ դրանց կարիքը եւ պակասը չկա»

Հարցազրույց Մայր աթոռի Յոգեւոր-կրթական բարձրագույն հաստատությունների վերատեսուչ գերաշնորհ տեր Գեւորգ Եպիսկոպոս Սարոյանի հետ:

– Սրբազան, հայ-ադրբեջանական չհայտարարված պատերազմի այս ընթացքում մեր հոգեւորականները շփման գոտում հայ զինվորի կողքին են, ոգեւորում են, աղոթում նրանց համար՝ միեւնոյն ժամանակ ձեռքում ամուր պահելով զենքը...

– Հայ զինվորի կողքին կանգնելու ավանդույթը խորը պատմական արմատներ ունի, այն հասնում է մինչեւ Դ դար: Սակայն մինչեւ այս ավանդույթի մասին խոսելը պետք է նկատել, որ մեր քրիստոնեական գիտակցության մեջ հավատքն ու հայրենիքը միեւնոյն հարթության վրա են գտնվում, պատահական չէ, որ Դ դարի կաթողիկոս Ս. Վրթանեսը սրբացրեց հայրենիքի համար ընկածներին: Իսկ Վարդանանց պատերազմն արդեն ձեւավորեց մի ավանդույթ, որը ուղենշային դերակատարություն ունեցավ հայ ժողովրդի պատմության ընթացքում, այն այսօր էլ առաջնորդում է հայ զինվորին մարտի դաշտում:

– Փաստորեն, մեր պատմության հետ ենք ծառանդել: Իսկ խորհրդային կարգերի՞ ժամանակ...

– Խորհրդային կարգերի ժամանակ եկեղեցին այդքան հզոր չէր: Եկեղեցին շատ հոգեւորականներ չուներ, սակայն անկախության վերականգնումից հետո հիմնվեց բանակի հոգեւոր հովվությունը: Մասնավորապես Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի ջրջանում բանակի հոգեւոր առաջնորդությունն ավելի ամրապնդվեց, կնքվեցին պայմանագրեր պաշտպանության նախարարության հետ, որն այսօր դարձել է մեր եկեղեցու առաքելության անբաժանելի մի մասը լինել հայ զինվորի կողքին:

– Սնորհադաշնակալ այսօրվա չհայտարարած պատերազմի՞ դուք տեղեկություն ունե՞ք, թե քանի հոգեւորական է ծառայում բանակում եւ մեկնաբանե՞ք, խնդրեմ, Մայր աթոռի դերն այս օրերին:

– Նախ նշեմ, որ Հայոց բանակում վաթսուհինգ ավելի հոգեւորականներ են ծառայում իբրեւսպասավորներ, որոնց առաքելությունն է ամուր պահելու հայ զինվորի մարտական ոգին, նպաստելու նրա քրիստոնեական գիտակցության պահպանմանը կատակապես պատերազմական իրավիճակում: Վստահաբար այս գործոնն պետք է վերագրել այն իրողությունը, որ հայ զինվորները մարտի դաշտում միշտ պահպանել են պատերազմի էթիկան՝ ի տարբերություն ագրեսիոն հանրակրթության, որոնք վերջին դեպքերին վերստին իրենց դրսևորեցին իբրեւ վայրագ եւ բարբարոս կոտանքների ենթարկելով երկու ծեր ամուսինների, որոնց նկարներն արդեն արտասահմանյան մամուլում են հայտնվել: Ինչ վերաբերում է Մայր աթոռի դերակատարությանը, ապա վստահ եմ, որ կարիք չկա ավելորդ անգամ կրկնելու, որ Հայոց եկեղեցին իր հովվապետի առաջնորդությամբ մինչեւ վերջ ժողովրդի կողքին



է, ավելին՝ նրան քաջալերում եւ հուսադրում է երբեք տեղի չտալ թշնամու սաղարաններին, սա այսպես է եղել հարյուրամյակներ շարունակ: Էջմիածինն ամեն վայրկյան հետեւում է սահմանում տեղի ունեցող զարգացումներին: Միաբաններից արդեն ցանկություն հայտնողներ են եղել մարտադաշտ մեկնելու, վստահ եմ, երբ պահը հասնանա, Հայոց եկեղեցու ողջ հոգեւոր դասը զենքը ձեռքին կպաշտպանի մեր հայրենիքը, մինչեւ վերջին շունչը կմարտնչի թշնամու դեմ:

– Հոգեւորականներն ինքնակա՞մ են գնում բանակ:

– Հոգեւորականները նշանակվում են Հայոց բանակում, որպես հոգեւոր սպասավորներ, քարոզիչներ, ովքեր ապրում եւ կիսում են նույն զինվորի կյանքը: Հակառակ այն բանի, որ նրանք որպես հոգեւորականներ են ծառայում բանակում՝ բազմիցս լսում ենք, որ հաճախ զինվորի հետ զենքը ձեռքին հսկում են հենակետերը: Իհարկե, այս պահին մարտի դաշտում նույնպես կան հոգեւորականներ, վստահ եմ՝ Արցախի թեմի հոգեւոր դասից նույնպես կլինեն մասնակիցներ, ինչպես որ ժամանակին է եղել: Համաճանցում, ի դեպ, հրապարակվել էր երկու հոգեւորականի նկար՝ զենքերը ձեռքներին, մեկնաբանության մեջ ասվում էր, որ չկա ավելի հուզիչ բան, քան երբ հայ հոգեւորականն իր զինվորի կողքին է: Նշեմ նաեւ, որ վերջին շրջանում Արցախում ծառայող երիտասարդ սարկավագներից Հովհաննես Գալստյանը, որ նախանցած տարի էր ավարտել ճեմարանը, գլխի հատվածում վիրավորվեց թշնամու գնդակից: Այսօր նա հայրադարձեց շարունակում է իր սպասավորությունն այն վեհ գիտակցությամբ, որ հոգեւորականի պարտքն

է լինել իր ժողովրդի հետ, ամենադժվար պայմաններում: Այս առիթով ուզում եմ հիշել Սեւանի Վազգենեան հոգեւոր դպրանոցի պատմությունից մի հիշարժան դրվագ: Դպրանոցը հիմնադրվել է ներկայիս Հայրապետի կողմից, ինքն էլ հանդիսանում էր վերատեսուչը: 1992-1993 թվականներն էր, երբ դաժան մարտեր էին ընթանում Արցախն ազատագրելու համար Դպրանոցի սաներից մի խումբ մոտենում է Գարեգին Սրբազանին, թույլտվություն խնդրում, որպեսզի գնան Դարաբաղ՝ մասնակցելու կռիվին: Վեհափառ Հայրապետը տարիներ հետո միշտ հպարտությամբ է հիշում այս դրվագը, նշելով, որ իր համար սկզբնապես լուրջ մտորումների տեղիք է տվել սաների խնդրանքը, երկար մտածելուց հետո որոշել է սաներին հորդորել առայժմ ձեռնպահ մնալ, իրենց հայրենասիրությունն ուսման միջոցով արտահայտել, երբ պահը հասնանա, ապա անպայման իրենք էլ մասնակից կլինեն մեր ժողովրդի պայքարի սրբազան գործին: Ես վստահ եմ, որ այս ոգին այսօր էլ մեր հոգեւոր կրթական բարձրագույն հաստատությունների սաների մեջ գործում է: Ի դեպ, քիչ առաջ զանգահարեց Գեւորգյան ձեմարանի տեսուչը եւ ասաց, որ սաները ոտքի են ելել ռազմաճակատ մեկնելու վճռականությամբ, այս պահին հանդարտեցրել ենք նրանց, խոստանալով, որ իրենց ցանկությունն ու պատրաստակամությունը չի անտեւիլ, եթե առիթ ներկայանա: Ես հավատում եմ, որ մեր բանակը հաղթանակով է դուրս գալու նաեւ այս վիճակից: Տեսնում եմ, որ մեր ժողովուրդը նույնպես շատ կազմակերպված է, հակառակ մեր նահատակների, մենք բարձր գիտակցություն ունենք, եւ այդ գիտակցության շնորհիվ հաղթանակելու ենք: Մենք հաղթելու ենք անկախ այն բանից, թե թշնամին ինչ հզոր զենքեր ունի այսօր, վստահ եղեք, որ պարտություն է կրելու, որովհետեւ ոգի չունի, իսկ մեր ժողովուրդը ունի անկյտորում ոգի եւ պայքարելու կամք: Մեկ անգամ եւս առիթն օգտագործելով ուզում եմ շեշտել, որ այն մարդիկ, որոնք ասում են, թե հայ ժողովուրդը չի կարողանում համախմբվել, ուղղակի փորձում են պառակտել մեր ազգը: Պատմությունը փաստում է, որ ցանկացած վտանգի դեպքում հայը կարողացել է համախմբվել եւ մի կողմ դնել այլ հարցերի շուրջ եղած տարաձայնությունները: Սա շատ դրական երեւույթ է եւ արժանի է բարձր գնահատականի, ամենավաղ այսօր:

– Ձեր մաղաթը:

– Հայ զինվորին արիություն եւ քաջություն չեմ ուզում մաղթել, քանի որ դրանց կարիքը եւ պակասը չկա, այլ միայն հաղթանակ եմ մաղթում: Աղոթում եւ խնդրում եմ Բարձրեալ Աստծուն, որ պատերազմը շուտով ավարտվի, յուրաքանչյուր հայ զինվորի կյանքը մեզ համար թանկ է:

Չորուցեց Սամվել ՂԱՆԻԵԼՅԱՆԸ

Հարյուր և մեկ ապրիլ



24 ապրիլի, 2016 թիվ, քաղաք Կրասնոդար, Մուրբ Սահակ և Մուրբ Մեսրոպ հայ առաքելական եկեղեցի, օջախը հայի հույսի, հավատի ու սիրո... Այստեղ ամենուր անմոռուկ է ու մեխակ, և հայոց եռագույնն է հովանին խաչքարերի, թխահեր պատանիների ու դեռատի հայուհիների, որ դիմավորում են հայերին: Եվ հայերը գալիս են ու գալիս կրծքներին անմոռուկ ու եռագույն, աչքներին քարացած արցունք այն գողտրիկ մանուկների համար, որ հանգան մոր ցամաքած կրծքին, այն պատանիների համար, որ չապրեցին երանություն սիրո և խոնարհ հայուհիների, որ չմայրացան...

Հայակերն առավել անողորմ էր, քան մահն ինքը: Ոմանք խաչվեցին ու փացին անխաչ, ոմանք փրկվեցին՝ փալավ մոլոր, անհայրենիք, երբ որ Հայրենիք ուներին, ու անհող, երբ որ ուներին հող: Ապա ծնվեց կարոտը, հայի՝ կարոտը, անհագ, անբուժելի:



Եվ հարյուր տարի մենք լացեցինք...

Այսօր հայերը եկան՝ ակնածանքով, հազար-հազար, նախապապերի կանչով, 101-ը գրկած, բայց խրոխտ: Զարթոնքի առավոտ է, բավ է լացել. մենք երգ ենք ու պար, մեր ծիրանին դուռուկ է դառնում ու մեղեդի, մենք քար ենք ու պայքար: Պատմություն ունենք և պետություն: Մենք մեր սարերից անկոտոր լեռնություն ունենք ու անխախտ հավատ...

Մուրբ պատարագին Ռուսաստանի Հարավային Թեմի Առաջնորդ եպիսկոպոս Մովսես Մովսեսյանի ձայնն արձագանքում էր շուրջ բոլոր, և ամեն ոք աղոթում էր.

«Տեր, կեցո դու զհայրս...»

Փոքրիկ «Օրծեռնակաբերդ»-ն արյունվեց մեխակների կարմիրով, և բեմահարթակ ելավ մի ողջ պատմություն, որ ներկայացրին Պաշկովկայի հայ մշակույթի կենտրոնի հարյուրից ավելի սաներ: Մի շնչով անցան եղեռն ու զարթոնք, պատերազմ ու հաղթանակ, Արցախ ու միասնություն՝ ասմունքով, բեմադրություններով, երգեր ու պարերով, դիմ - դուռուկով: Խառնվեցին հառաչ ու ժպիտ: Մեխակները խոնարհվեցին: Մոմերը հանգան:

Զարթոնել է լառն. Հայրողիները տեղյակ են արդեն, որ մի ժամանակ մեր պատմությունը խլեցին մեզնից, ու ինչ-որ մեկը նվիրեց սրան-նրան: Վերջիններս գողացան մեր պապերի գերեզմաններն անգամ, քանի որ իրենք նախնիներ չունեն, ոչ էլ պատմություն:

Հարյուր հատ մպիվան ապրիլ ապրեցինք:

Առաջին ապրիլ՝ հարյուրից հետո... Դու էլ բերեցիր կրակոց ու գոհ: Մենք կովի ելանք մեր Դավթի նման, ելանք ազգովի, թե ծեր, թե մանուկ, ու մեր չորս օրից աշխարհ զարմացավ:

Դիմացիր, Արցախ, դու կոչում ունես, առաքելություն. շնչառությունն էս հայոց հարության: Դեռ կապաքինվի մեր Հայրենիքը՝ խեղանդամ, կոնատ: Նրանք սարսափում են մեր ապրիլից, մեր ապրելուց, մեր մահից անգամ:

Այսօր հայ մայրը զինվոր է ծնում, ու ահ չունենք մենք, մեզ համար մեռնելն էլ ապրել է: Տիրահոջակներ, ձեռք քաշեք մեզնից, մենք արարում ենք, գնացեք դուք ձեր հովվությունն արեք: Գիտե՛ք քանի Հայկ ու Տիգրան, Միհր, Դավիթ, Ավոներ են դիրքեր պահում...

... Դրոշները պարում են: Եկեղեցին մխում է: Մանուկները նման են անմոռուկների:

Նրանք դատապարտում են.

– Աշխարհ, դու պարտք ես, պարտք ես իմ ազգին:

Տասներկու հայուհիներ, ինչպես տասներկու պոյուն, հիշում են ու պահանջում:

Հիշենք, որ ապրենք, նրանց արյունն է մեր երակներում:

Եվ դուռուկը թախիժ է բերում, դիմը՝ հաղթանակի տարափ, ու թնդում է պարը: Ասես կայծեր են թռչում «Արին – Բերդ» համայնքի տղաների ձեռնազարկից, ու համոզվում ես, որ այդ ձեռքերը զենք էլ կբռնեն ու նոր հաղթանակ կբերեն ազգին:



160

Ավարտը Շառլ Ազնաուրի Հայաստանն էր, որ հպարտության զգացումով լցրեց հոգիները: Հաղորդավարները հրաժեշտ տվեցին, ու սկսվեց մի նոր հանդես:

Սթափվեց հայ ոգին: Պատանիները շրջան կազմեցին և դիտլի նվագակցությամբ պարեցին՝ հնչեցնելով հայ ազգային-ազատագրական երգեր, աղջիկներն էլ բոլորվեցին նրանց շուրջն ու «Քոչարի» բռնեցին, թիկունք դարձան: Մարդիկ, որ խմբերով եկան, հեռացան մեկ-մեկ ավստոսալով: ասես նոր են թողնում տուն ու հայրենիք: Գնացին, որ գան, երբ մյուս անգամ նրանց կկանչի մայիսն հաղթական, ու կդիմավորեն Սուրբ Սահակ

և Սուրբ Մեսրոպ եկեղեցին ու Պաշկովկայի հայ մշակույթի կենտրոնը:

Անցավ դարը եղեռնական: Բարև, նոր դար, վերածնության ու միասնության, հաղթանակի ու հիշատակի դար, սերմանի ր մեր պատմությունը սերունդների մեջ, որ հայոց Անմոռուկը չթառամի: Թող ամեն ապրիլ նոր անմոռուկներ բերի՝ կուսական շաղով, արցունք-առեջով, ծնվեն նոր քաջեր, ու նոր երգեր հնչեն մեր միացյալ ազգի ու հզոր հայրենիքի մասին:

Հայն ունի ապրիլ ու մայիս ու ունի:

Խաղաղություն ամենեցուն...

Գալինա ՍԱՐԳՍՅԱՆ
Լուսանկարները՝ Բ. Վ. ՄԻՒԹԱՐՅԱՆԻ

ԳՆԱՄ ԱՐԱԳԻԼ ՀԱՇՎԵԼՈՒ

Այս շարադրանքն ինձ արագիլները հուշեցին:

Ուժեղ քամին պոկել, ցած էր բերել արագիլի բույր: Մարդիկ տներից դուրս էին թափվել, նայում էին մոլորված թևավորների գույզին, ուզում էին ինչ-որ բանով օգնել, բայց այդ պահին տեղ հասան փրկարարներն ու գործն իրենց ձեռքը վերցրին: Աստիճանը վերև ձգվեց, համազգեստ հագած տղան մագլցեց մինչև պուռի կատարը, իսկ ներքևում սկսեց եռուզեռ: Մեկը տնից տախտակներ ու մուրճ բերեց, մյուսը վագեց մեխերի ետևից, կանաչ բիլն բարձր տվեցին, որ միջի փետուրները հանեն, երեխաներն առվի եզրից ցախ ու շիվ հավաքեցին, մինչև որ բույրը շյուղ առ շյուղ հյուսվեց, տեսքի եկավ ու դարձավ առաջվապես:

Հետո մի ամբողջ փողոց իր հոգսն ու ցավը մոռացած հավաքվել էր էլեկտրայան շուրջն ու սպասում էր արագիլների գալուն: Երբ

վերջապես նրանցից, առաջինը զգուշավոր թևաբախումով նախ պտույտներ տվեց և հետո իջավ նոր բնի մեջ, հավաքվածները խորը շունչ քաշեցին, իսկ մեկն ամփոփեց բոլորի մտածմունքը. «Մարտը էլ են շնչավոր, սպրելու իրավունք ունեն»:

Օրեր անց մարդաշատ մի վայրում հիշեցի ու պատմեցի արագիլների դեպքը: Ներկաներից մեկը լսեց ու ասաց. «Բան էք գտել անելու: Հիմա դրա ժամանակն է»: Մարդը երևի ուզում էր ասել, թե կան դրանից ավելի կարևոր գործեր, թե միայն պարապ մարդիկ իրենց թանկ ժամանակը կվատնեն թռչնաբույն տեղադրելով և, ընդհանրապես, այս կյանքում ամեն ինչ ունի հերթականություն: Սկզբում կարևորներն են, հետո գալիս են անկարևորները:

Առաջին դեպքը չէր, որ նման կարծիք էի

լում: Ընդհանրապես քիչ չեն նրանք, ովքեր միշտ գիտեն, թե երբ ինչ է պետք անել և երբ ինչ պետք չէ անել: Դրանք այն մարդիկ են, ովքեր առաջնորդվում են ստորադասման հատուկ աստիճանակարգով, նրանց համար սկզբունքային կարևորություն ունի «հիմա»-ի ու «հետո»-ի հստակ տարանջատման պայմանը, իսկ եթե հանդգնել ես խախտել ժամանակային պայմանականությունները, եթե դու դեռ այնքան հասուն չես գտնվել հասկանալու, որ ամեն բան իր նախանշված ժամանակն ունի, այդ դեպքում դու ոչ միայն սահմանափակ ընկալումներ ունես, այլև քո թեթևամիտ էգոիզմով զրկում ես հանրային շահը, որովհետև այդ շահն ամեն օր, ամեն վայրկյան ականջներդիդ տակ կրկնվում է, թե ինչն է առաջնայինը և դու միշտ մնալու ես լուսանցքում, եթե շփոթել ես հիմնականի ու անեականի տեղերը:

Գարծում էք սա ընդամենը կամակոր վերաբերմունք է, որ կարելի է քամախել

1992-ին հայ գիտնականը Վազգեն Սարգսյանին առաջարկել էր իր ստեղծած մեկ հրթիռով հաղթանակած ավարտել Ղարաբաղյան պատերազմը

Աշոտ Աղաբաբյանի մեծ աղմուկ հանած ու մի քանի անգամ հրատարակված «Մենակը» հայտնի վեպում մի դրվագ կա, որտեղ հանրահայտ գիտնականը 1992 թ-ին հանդիպում է Վազգեն Սարգսյանին և առաջարկում ստեղծել մի հրթիռ ու դրանով ավարտել պատերազմը: Հեղինակը ժամանակին հանդիպել և այս թեմայով գրուցել է և՛ Սպարապետի, և՛ մեծանուն գիտնականի հետ: Երկուսն էլ հաստատել են այդ պատմության իսկությունը, սակայն կառավարությունն այն ժամանակ միջոցներ չի տրամադրել (կամ չի ունեցել) հրթիռի համար:

Ճիշտ է, գիրքը գեղարվեստական է, սակայն զուտ փաստերի վրա է հիմնված: Ներկայացնում ենք «Մենակը» գրքի «Միայնակ գայլը» ենթավերնագրով հատվածը, որը խիստ կհետաքրքրի մեր ընթերցողներին:

Առնո Սարոյանը ամիսներով փակվեց Զիկատարի իր մենաստանում: Գրեթե ոչ ոքի հետ չէր շփվում: Կենտրոնը աշխարհի տարբեր երկրներից տիեզերական սարքավորումների բազմաթիվ պատվերներ ունի: Բայց նա գրեթե ոչինչ չէր զբաղվում: Կենտրոնի աշխատանքները հանձնարարել էր տեղակալին ու փակվել աշխատասեյակում: Մերձմոսկովյան ստորգետնյա գերգաղտնի ռազմակայանից դուրս գալուց հետո գրեթե անձանաչելի էր դարձել: Ոչ ոք ու ոչինչ նրան չէր հետաքրքրում: Միակ բանը, որով զբաղվում էր, Խրոնոսն էր: Մանրակրկիտ, դանդաղ, դետալ առ դետալ ուսումնասիրում էր: Անշտապ, անտրամադիր:

Սկսվել էր պատերազմը: Ռազմաճակատում ծանր իրավիճակ էր: Ջոհեր, զոհեր... զոհեր: Այդ ամենին հետևում էր ռադիոյով ու հեռուստատեսությամբ: Մի առավոտ արթնացավ ու ձեռքը տարավ կառավարական հեռախոսին:

– Ես Առնո Սարոյանն եմ, ճանաչո՞ւմ եք այդպիսի մարդու:

– Այո՛, իհարկե, պարոն Սարոյան, մեզ համար մեծ պատիվ է, որ զանգահարել եք, ես պաշտպանության նախարարի օգնականն եմ, ինչո՞վ կարող եմ օգտակար լինել, – պատրաստակամ արագ-արագ արտասանեց մի երիտասարդ ձայն:

– Այդ ես եմ ուզում օգտակար լինել: Կարո՞ղ եմ խոսել նախարարի հետ, – հարցրեց Սարոյանը:

– Ցավոք, անհնար է, նա ռազմաճակատում է, չգիտեմ՝ երբ կապի մեջ կմտնի, – ասաց երիտասարդը:

– Խնդրում եմ փոխանցեք նրան, որ Առնո Սարոյանը Զիկատարի կոսմոսական կենտրոնում սպասում է իրեն: Կարևոր և շտապ գործ է:

– Ես անպայման կփոխանցեմ, պարոն Սարոյան:

Երկու օր անց երեկոյան հինգեկառավարական հեռախոսազանգը:



– Նախարարն է, Առնո Լվովիչ, երկու ժամից կլինեն Ձեզ մոտ՝ Զիկատարում:

Ջերմ ողջագուրվեցին: Նախարարն անձնապես վաղուց էր ճանաչում Սարոյանին: Երբ Ստեփանակերտից ուղղաթիռով իջել էր Երևանի օդանավակայանում, նրան անմիջապես զեկուցել էին Սարոյանի հեռախոսազանգի մասին: Սարոյանը հենց այնպես չէր զանգի, նա մեզանից լուրջ մարդ է, անմիջապես ինձ կապեք նրա հետ, ասել էր նախարարը:

Սարոյանն ուշադիր նայեց նախարարին, խիստ հոգնած ու տանջված տեսք ուներ: Բայց նույն հզոր տեսակն էր՝ կտրուկ ու կրակոտ հայացքով:

Առնոն խնդրեց հակիրճ պատմել, թե ինչ իրավիճակ է ռազմաճակատում: Նախարարը զուսպ ներկայացրեց պատկերը: Իսկ պատկերը տխուր էր ու ծանր:

– Եկել եմ մահապարտների գունդ ստեղծեմ, որպեսզի փրկենք Ղարաբաղը: Վաղը հայտարարություն կանեմ հեռուստացույցով, – ասաց զորավարը:

– Մեզ մահապարտներ պետք չեն գա, եթե ուշադիր լսես ինձ ու հավատաս, – հանկարծ ձայնի տոնը փոխելով, ասաց Սարոյանը:

Նախարարը, որ հոգնած փովել էր բազկաթոռին, միանգամից զգաստացավ, նստեց և սևեռուն հայացքն ուղղեց Առնոյին: Հասկացավ, որ խոսակցության թեման ռազմաճակատն է:

– Լսիր ուշադիր, ինչ պատմում եմ՝ հեքիաթ չէ, գաղտնիք է, որ այս պատերից դուրս չպիտի գա: Ամիսներ առաջ ռուսներն ինձ հրավիրեցին Մոսկվա և տարան իրենց ստորգետնյա գերգաղտնի հրթիռային ռազմակայան: Նրանք իմ աշխարհառչակ հայտնագործությունը վերափոխել էին զենքի...

Նախարարը լարված և ուշադիր լսում էր Սարոյանին: Առնոն մի կուր միսկի ըմպեց ու ոտքի կանգնելով, շարունակեց խոսքը.

– Իմ աստղային տվիչները տեղադրել էին բալիստիկ հրթիռների մարտագլխիկներին: Առաջը տվիչների 5000 կիլոմետր արձակած հրթիռը 200 կիլոմետրի շեղում կարող է ունենալ: Իսկ տվիչների տեղադրմամբ՝ օգտագործելով աստղերը, շեղումը կազմում է

150 մետր...

Նախարարն, ասես, քնից վեր թռավ ու ինքնաբերաբար ասաց՝ Չի կարող պատահել...

– Լսիր, երիտասարդ, դուք՝ զինվորականները, միայն կրակել գիտեք, երբեմն նաև լսեք և հավատացեք ձեր գայլիս, – վրդովվեց Սարոյանը:

Նախարարը մեղավորի պես ձեռքերը վեր բարձրացրեց՝ լսում եմ:

– Հիմա ավելի կոնկրետ կխոսեմ: Այստեղից՝ Զիկատարից մինչև թշնամու մայրաքաղաք ուղիղ գծով վեց հարյուր կիլոմետր է: Հասկանո՞ւմ ես, ինչ չնչին տարածություն է ասածս հրթիռների համար: Հիմա լսիր, այն ինչ կասեմ, դա այսօր կարող են անել ռուսները և ես, ուրիշ՝ ոչ ոք:

Բայց ես ավելի արագ կարող եմ ստեղծել, ռուսներից արագ: Ես կարող եմ ստեղծել այդ զենքը և իմ իսկ ստեղծած աստղային տվիչները տեղադրել մարտագլխիկներին: Վեց հարյուր կիլոմետրի վրա շեղումը կկազմի 20-25 սանտիմետր, – Սարոյանը բռնկեց իր ձեռքերը և խփեց սեղանին: Սուրճի բաժակները շրջվեցին: Նախարարը ոտքի վրա հիացած նայում էր Սարոյանին:

– Բայց սա ես ուզում եմ ստեղծել, որ պատերազմը դադարի, – շարունակեց Առնոն:

– Ո՞նց թե, – զարմացավ նախարարը, – խաղաղության աղաճիկ է Ձեր հրթիռը:

Առնոն քմիծաղեց, նախարարի խոսքը դուրը եկավ:

– Հիմա կասեմ, թե ցնդած պրոֆեսոր եմ, բայց ուշադիր լսիր: Մենք զենքը պատրաստում ենք: Մեր երկրի ղեկավարը զանգահարում է հակառակորդ երկրի ղեկավարին և ասում՝ պարոն, հենց հիմա դուրս եկեք Ձեր նախագահական նստավայրից ու հեռվից նայեցե՛ք՝ նախագահական շենքի մուտքի աջ ծաղկամանի մեջտեղում 20 րոպե հետո հրթիռ կպայթի: Հիմա ինձ ասա, այսպիսի բան տեսնողը, այլևս կպատերազմի: Հակառակորդի այդպիսի ճշգրտության զենքը տեսնելով կհամարձակվի խաղալ իր երկրի ճակատագրի հետ: Դրանով կկանխվի պատերազմը: Այլևս գոհեր չենք տա: Ինչքա՞ն երիտասարդներ են գոհվում, – Սարոյանն ուշադիր նայում էր նախարարին: Վերջինս մտախոհ, լուռ լսեց Առնո Սարոյանին ու ասաց.

– Ի՞նչ է՞ անհրաժեշտ այդ ամենի համար: Մեզինից ի՞նչ է կախված:

– Անցանք ամենակարևորին, – ասաց Սարոյանը, – բայց վախենամ, թե ոգևորությունը կմարի: Արի հաշվենք, թե որքան գումար և հումք է անհրաժեշտ: Ես արդեն հաշվել եմ, տես:

Եվ Առնոն ներկայացրեց իր հաշվարկները: Զորավարը խոժոռվեց: Գրիչը վերցրեց և սկսեց իր հաշվարկներն անել: Առնոն դուրս եկավ պատշգամբ: Վիսկի էր ըմպում, բայց լարվածությունից ձեռքը դողում էր: Ոչ մի լավ բան չէր գուշակում նախարարի պա-

180

տասխանից: Դանդաղ մոտեցավ ու նստեց նրա դիմաց:

– Առնո Լվովիչ, Ձեր առաջարկությունը կարող է հաղթանակ ապահովել... Բայց մենք չենք կարող այսպիսի գեներ ստեղծել, – Առնոն հարցական ու խիստ նայեց նախարարին, վերջինս շարունակեց: – Այս թվերը մեր երկու տարվա բյուջեն են, հասկանո՞ւմ եք: Ես այսօր մի տանկ գնելու համար շուն եմ քերթում: Վախենամ, թե չկարողանանք իրականություն դարձնել Ձեր առաջարկը:

– Իսկ դու կարո՞ղ ես հաշվել, թե ինչքան միլիարդներ եք ծախսելու պատերազմի ողջ ընթացքում, էլ չեմ ասում հազարավոր զինվորների անդարձ կորուստը: Հավատա, տասնապատիկ ավելի թանկ է նստելու հաղթանակը, եթե չստեղծենք այդ հրթիռները: Դու չես պատկերացնի, թե որպես գիտության մարդ, ինչ ողբերգություն է ինձ համար, որ իմ մաքուր գիտական հայտնագործությունը վերածվել է գեներին: Ու այսօր ուզում եմ, որ այդ գեները խաղաղությունը ծառայի: Արդյո՞ք ես հայրենիքին էլ պիտանի չեմ, – Առնոն դուրս ելավ:

Նախարարը հուզվեց, ուզեց պինդ գրկել պրոֆեսորին, որին անչափ հարգում ու սի-

րում էր: Բայց գիտեք, որ Սարդյանին միմիայն դրական պատասխանը կհանգստացներ:

– Առնո Լվովիչ, ես կխոսեմ երկրի ղեկավարության հետ, ամենայն հավանականությամբ, կառավարության ղեկավարը կհանդիպի Ձեզ հետ: Բայց չեմ ուզում Ձեզ խաբել: Վախենամ, թե ուժներս չպատի... Իսկ հայրենիքին Դուք միշտ եք պետք, – Նախարարն ամուր գրկեց Սարդյանին ու դուրս եկավ:

Երկու օր անց Սարդյանին հրավիրեցին կառավարություն: Վարչապետի ընդունարանում նա եւ մեկ անգամ թերթեց գծագրերը, ինչ-որ հաշվարկներ արեց: Անցավ կես ժամ: Ինչ-որ մարդիկ էին ներսուղուրս անում: Առնոն նյարդայնանում էր.

– Երիտասարդ, վարչապետը տեղյա՞կ է, որ Սարդյանն սպասում է իրեն, – խիստ տոնով հարցրեց օգնականին:

– Այո, իհարկե, բայց նա շատ զբաղված է, մի քիչ էլ սպասեք, – ասաց օգնականը:

Եվս կես ժամ անցավ, նոր մարդիկ եկան ու աղմուկով լցվեցին վարչապետի աշխատասենյակ: Առնոն շշմած նայում էր այդ ամենին: Նա առաջին անգամ էր տեսնում այսպիսի փնթի, անմակարդակ, անկազմակերպ վիճակ կառավարությունում: Բրեժնեի,

Կորոլյովի, Կելիշի ընդունարաններում երբեք իրեն չեն սպասեցրել: Այս ի՞նչ վիճակ է, ովքե՞ր են երկրի տերերը: Դեռ կոմունիստներին էլ հայիյություն են: Ի՞նչ կարգապահություն ունենին:

Սարդյանն այլևս չհամբերեց: Ոտքի ելավ և մոտենալով օգնականին, բարձրաձայն, գրեթե գոռալով ասաց.

– Հայտնե՛ք Ձեր վարչապետին, որ ինքը շատ փոքր մարդ է, որ Սարդյանին երկու ժամ սպասեցին: Նա իր տեղում չէ և վարկաբեկում է այդ պաշտոնը:

Ընդունարանում քար լռություն տիրեց: Առնոն շրջվեց և դուռը թափով շրխկացնելով, դուրս եկավ...

Մեկ շաբաթ անց զանգահարեց Պաշտպանության նախարարը:

– Առնո Լվովիչ, ես ցավում եմ, որ կառավարությունը միջոցներ չկարողացավ հայթայթել Ձեր առաջարկությունը իրականություն դարձնելու համար: Կներե՛ք: Հոյակապ առաջարկ էր, բայց երկիրն այսօր ի վիճակի չէ նման գոբալ հարց լուծելու... Իսկ վարչապետի պահվածքի համար ուղղակի կներե՛ք: Ես ամաչում եմ... թյուրիմացություն է եղել...

– Թյուրիմացներին վստահելով երկիր չե՛ք կառուցի, – պատասխանեց Սարդյանը:

ԳԼՈՒԿԱԿԱՆԸ

Ֆրոսյա Ջանջուղազյան Իր գործի մշակը

Մեզ հետ, մեր կողքին քայլում են մարդիկ, ովքեր անձ-նկարագրի հետ մեկտեղ իրենց էության մեջ խտացնում են բացառիկ հատկանիշներ: Բացառիկ նվիրվածություն, որով անում են իրենց գործը, բացառիկ հմտությամբ ու աշխատասիրությամբ, բացառիկ համեստությամբ ու բարության:

Մեր քաղաքի այգորինակ վարքագիծ ու կենսակերպ ունեցող մտավորականներից մեկն էլ մեր Ֆրոսյան է՝ Լոռու մարզային գրադարանի փոխտնօրեն Ֆրոսյա Ջանջուղազյանը:

Գրիչ վերցնելու նպատակը գուտ տեղեկատվություն տալը չէ, այլ հիասթափ մարդու մասին խոսելն է, ոլորտի նվիրյալի աշխատանքը գնահատելը:

Խոսում է նրա վաստակը գրադարանային գործում: Ապրածի, նվիրումի շնորհիվ ձեռքբերումների ամբողջությունը ապրած տասնամյակներն իսկ դարձել են բեղուն ու իմաստավոր: Տարիների փորձն աստիճանաբար հմտացրել է նրան, դարձրել անփոխարինելի աշխատող:

Ակնհայտ է, որ յուրաքանչյուրիս կյանքում անցնելիք ճանապարհը մեր իսկ ձեռքին է:

– Պատահական չէր, որ ինձ համար նախաձեռնված էր գրքի աշխարհը, որովհետև դեռ մանկուց ինքնամոռաց տրվում էի գրքին: Դե ես էլ ընտրեցի կյանքի իմ ճանապարհը՝ ինձ նվիրելով գրքերին, սիրելի հաստատությանն ու նրա զարգացման շնորհակալ գործին:

Ֆրոսյա Ջանջուղազյանի կենսափորձը մեզ ուսուցանում և ապացուցում է, որ յուրաքանչյուր գործի սիրով պետք է մոտենալ, հակառակ դեպքում ոչ հաջողություն կունենաս, ոչ էլ հարգանք:

Պարզապես մարդն ապրում է իր աշխատանքով, իր պարտականություններով ու հաջողություններով: Սա այն դեպքն է, որ գործն ու մարդը գտել են իրար, այստեղ է, որ ստեղծվել է այն գեղեցիկ ներդաշնակությունը, որից միայն բարիք է ծնվում:

– Լոռու, մասնավորապես Կիրովական-Վանաձորի մատենագիտական ոլորտը, թվում է սկսվել է Ֆրոսյա Ջանջուղազյանով, քանզի կես դար շարունակ հանրապետության երրորդ քաղաքի ինժեներատեխնիկական մասնագետները, գրականության, մշակույթի, արվեստի աշխատողները, գործիչները, հազարավոր ուսանողներ ու սովորողներ, գրքասերներ, ովքեր շփվել և շփվում են գրադարանային համակարգի հետ՝ ի դեմս ճանաչում են գրադարանային ու մատենագիտական գործի Մայրապետ-Ֆրոսյանին:

Սամվել ԿԱՆԱԹՅԱՆ

37 մշակույթի վաստակավոր գործիչ, դրամատուրգ

1969 թվականին ավարտելով Երևանի պետական համալսարանի «Գրադարանավարության և մատենագիտության» բաժինը գրադարանավարուհի-մատենագիր մասնագիտությամբ մուտք գործեց ոլորտ, լծվեց ընթերցողի ուսումնադաստիարակչական աշխատանքին և չորս տասնամյակից ավելի տարիներ կատարելության հասավ իր գործում, ասել է, թե դարձավ լայն աշխարհայացքով գրադարանավարուհի, որի մանկավարժական, հոգեբանական մոտեցումները անշուշտ, խոսում են որակյալ մասնագետ լինելու մասին:

– Մի՞րե՞ք գիրքը, կարդացե՛ք, շոշափե՛ք այն, զգացե՛ք գիրք-ընթերցող համերաշխու-

թյան զարկերակը:

Քանի-քանի սերունդ էլսել Ջանջուղազյանի այս ընդհանրական միտքը: Քանի-քանի սերունդ է ապրել մարդու և անհատի համար այս կարևորագույն զգացումով, որ ծնվում է միայն գրադարան կոչված հաստատության պատերի ներսում, ինքն էլ չի հիշում: Բայց միշտ էլ կրկնում է.

– Երբ դու գրքերի անհատակ ծովում կրվում ես, հաղթում, պայքարում, հիանում, հիասթափվում, վայրեջք ու վերելք ապրում... Այս կյանքը լիարժեք զգալու ամենակարճ ճանապարհն է և այն արահետը, որով անցել են մեր մեծերը, մեզ կրթողները, դաստիարակները, մենք:

Միշտ բաց թողնե՛ք գրաշխարհի անծայրածիր դռները՝ ետևից տանելով սերունդներ ու սերունդներ:

– Անուրանալի է նրա նվիրվածությունը իր գործին և գրադարանի ընթերցողներին: Ընթերցողները գոհ են տիկին Ջանջուղազյանից, ով շատ արագ ու հստակ կարողանում է ընթերցողին կողմնորոշել ծով գրականության մեջ:

Արամայիս ՍԱՐԳՍՅԱՆ

37 արվեստի վաստակավոր գործիչ, դերասան

Մեծ է նաև նրա վաստակը Վանաձոր քաղաքում, Լոռու մարզում գրադարանային համակարգի ստեղծման գործում: Մատենագիտական ու մեթոդական, գրադարանային նորությունների ու աշխատանքների թեմաներով նրա զեկուցումները, դասախոսությունները ուսուցողական ուղեցույց են հանդիսացել տասնյակ գրադարանավարների համար:

Հասցրել է հեղինակել մատենագիտական հանձնարարականներ ու տասնյակ այլ հոդվածներ, որոնք տպագրվել են հանրապետական ու տեղական մամուլում:

Գրականության, արվեստի մեծերին նվիրված ամեն մի ցերեկայինների նրա անուրանալի դիտողականությունն ու խոսքը միջոցառումները դարձրել ու

ԴԱՆԻԵԼ ԲԵԿ-ՓԻՐՈՒՄՅԱՆ. ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

1918 թվականի մայիսյան այս օրերին հայ ժողովուրդն արյունալի մարտեր էր մղում Բաշ Ապարանում, Դարաքիլիսայում եւ Սարդարապատում: Օրհասական այդ ճակատամարտերում ձեռք բերած հաղթանակների շնորհիվ ծովեց Հայաստանի առաջին Հանրապետությունը: Այդ ճակատամարտերի մասին հաճախ ենք գրել: Այսօր ներկայացնում ենք ականավոր ռազմական գործիչ, Սարդարապատի ռազմաճակատի հրամանատար Դանիել Բեկ-Փիրումյանին: Ծնվել է 1861-ին Արցախի Նախիջեանիկ գյուղում: Ավարտել է Շուշիի քաղաքային ուսումնարանն ու 20 տարեկանից անցել զինվորական ծառայության ընդգրկվելով Երևանյան 13-րդ լեյբգվարդիական զնդում: 1881-83 թթ. սովորել է Թիֆլիսի հետևակային յունկերական ուսումնարանում: Ավարտել է նաև Օրանիենբաումի (այժմ Լենինգրադի մարզի Լոմոնոսով քաղաք) սպայական հրաձգային դպրոցի դասընթացները: 1883-ին Բեկ-Փիրումյանին շնորհվել է փոխարապորտչիկի, 1888-ին պորուչիկի, 1900-ին կապիտանի, 1913-ին փոխգնդապետի կոչում: Եղել է վաշտի, գումարտակի, գնդի հրամանատար: Առաջին աշխարհամարտի տարիներին կռվել է Կովկասյան ռազմաճակատում: Ցուցաբերած ծառայությունների համար պարգևատրվել է Ռուսական կայսրության տարբեր շքանշաններով եւ Գեորգիեյան անվանական զենքով: ԽՍՀՄ մարշալ Դով-հանեն Բաղդասյանը եւ ռազմական այլ գործիչներ բարձր են գնահատել Դանիել Բեկ-Փիրումյան-գործարարամանատարին: Վախճանվել է 1921 թ. վաթսուն տարեկան հասակում:

«Հայկական հրետանու դիպուկ կրակը, պարտիզանական զնդերի խղական գրոհները, 5-րդ գնդի մեքոդիկ առաջխաղացումը եւ զնդացրային հնձիչ կրակը թե՛ ճակատից, թե՛ կողքից եւ թե՛ թիկունքից հարվածող



հեծյալ խմբերն ու աշխարհագրայինները Արաքս կայարանից դեպի Կարաբուրուն տանող դռերը մեծ գերեզմանոց դարձրին «գելիբոլու» դիվիզիայի համար, որը թուրքերի աննամարտական զորամասն էր: 1918 թվականի մայիսի 22-26-ի կռիվների ժամանակ թշնամին այդտեղ թողեց 3500 դիակ», — գրում է պատմաբան Յ.Թուրչյանի «Սարդարապատի հերոսամարտը» գրքում հաջողության կարեւոր գրավականներից մեկն էլ համարելով Դանիել Բեկ-Փիրումյանի հրամանատարական ճիշտ աշխատանքը:

Իր հուշերում Դանիել Բեկ-Փիրումյանի մասին գրում է նաև ռուսական բանակի սպա Ալեքսանդր Շենուրը, որը ծնունդով էլզաս-Լոթարինգիայից էր: Նա անթաքույց հիացումներով է խոսում հայկական զորքերի հրամանատարության կազմած մարտական պլանների մասին: Մայիսի 26-ի ճակատամարտի մասին նա գրում է. «...Օրագիրը լավ էր, բայց կիսաջողվե՞ր իրագործել: Ձորավար Բեկ-Փիրումյանի սպայակազմը գիշերանց փոխադրվեց Սարդարապատ կայարանը (որն ազատագրված էր արդեն), որտեղից կատարվում էին բոլոր կարգադրությունները: Ձորամասերի միջեւ տեղագին փոխգործունեություն կար: Դուրս էին բերվում մասնավոր պահուստներ, տրվում էր ամեն անհրաժեշտ բան: Փամփուշտներ էին բերվում: Մարդանց լավ կերակրում էին: Բոլորը հասկանում էին հաջող օրվա նշանակությունը»: Խոսում է նաև Դանիել Բեկ-Փիրումյանի մասին պատմող հետեյալ դրվագը. «Հազիվ էր լույսը բացվել... եւ ամբողջ ճակատով մեկ սկսվեց հրագեներների կռիվ: Կրակում էր հրետանին, երբեմն ճարճատուն էր գնդացիրը: Թուրքերը մի քանի անգամ փորձեցին իջնել իրենց բլուրներից եւ հարձակվել, բայց ամեն անգամ էլ ուժեղ կրակով նրանց ստիպում էին հետ դառնալ: Ձորավար Փիրումյանն իր կարմիր աստառով զինվորական վերարկուով քայլում էր հետ ու առաջ եւ վերջապես չհամբերելով՝ մեկնեց դեպի կռվող շրջան:

Մեկնելիս նա ինձ հանձնեց տվյալ կռիվ դեկավարությունը՝ ասելով, թե՛ կապիտան, Դուք արդեն ամեն ինչ գիտեք, դեկավարեք կռիվը, ինչպես որ մենք որոշել ենք»:

Ապա շարունակելով նկարագրել վճռական օրվա կռիվները Ա. Շենուրը գրում է. «Մեր զորամասերը թուրքերից հազար քայլ հեռավորությունից դանդաղ առաջ էին շարժվում եւ արդեն մոտ էին թշնամուն չորս հարյուր քայլի վրա: Առջեւից, իր վերարկուի կարմիր աստառը դեպի դուրս հագած, քայլում էր զորավար Փիրումյանը: ...Ամեն անգամ, որ թուրքերը անցնում էին գրոհի, մեր աչքերը (երկու վաշտ, երկու քնդանոթ) զարկում էր նրանց կողերին: ...Ես համահարգեմիս միջոցով իջեցրի մախոթող պատրաստված հրամանը՝ հարձակվել: Ձորավար Փիրումյանն ինքը տվեց հրաման: Հարքերը ոտքի ելան եւ «ուռա՛» կանչելով առաջ վազեցին: Իսկ թուրքերը խուճապի մատնվեցին, որովհետեւ նրանց թիկունքն անցած ջոկատը կրակ էր բացել թուրքերի պաշարակիր սայլերի ու թիկունքի վրա: Մի պահ, եւ թուրքերը փախուստի դիմեցին՝ թողնելով իրենց ամբողջ ռազմամթերքը, պաշարակիր սայլերը, իրենց վիրավորներին ու սպանվածներին»:

Այդ կռվում Դանիել Բեկ-Փիրումյանի կադրային գործին աջակցություն էր ցույց տալիս Պանդուխտի (Միքայել Սեդյան) մշեցիներից կազմված ջոկատը, որն անակնկալ հարձակումով գրավեց շատ կարեւոր բարձունք ու զգալի տարածք, իսկ Փիրումյանի զորքը ճակատային գրոհով մոտեցավ եւ ամրապնդեց հաղթանակը: Սարդարապատի ռազմաճակատի հրամանատար Դանիել Բեկ-Փիրումյանի մեծությունն այն էր, որ նա անվարան գրեթե անհուսալի իրավիճակում ստանձնեց ռազմաճակատի հրամանատարությունը, «Հաղթանակ կամ մահ» նշանաբանով վստահաբար գնաց դեպի հաղթանակ: Նա հմտորեն կարողացավ համախմբել այս ու այն տեղերում ընթացող տարերային մարտերը, ձեւավորեց մեկ միասնական ռազմաճակատ եւ դեկավարեց թե՛ կադրային գործի, թե՛ աշխարհագրային ջոկատների գործողությունները: Նա հիմադրի ռազմական գործիչ էր, նաեւ լավ մարդ ու ընկեր:

Խոսելով Սարդարապատի ճակատամարտի եւ Դանիել Բեկ-Փիրումյանի մասին անհմար է չտալ նաեւ զինվորական մեկ այլ փայլուն գործիչ՝ փոխգնդապետ Պողոս Բեկ-Փիրումյանի անունը, որը Դանիել Բեկ-Փիրումյանի հորեղբորորդին էր: Մեծացել էին միասին, միասին էլ ընտրել զինվորականի մասնագիտությունը: Պողոս Բեկ-Փիրումյանն էր դեկավարում Սարդարապատի ճակատամարտին մասնակցած եւ իր անունը փառքով պսակած հրաձգային 5-րդ գունդը, որը բաղկացած էր միայն արցախցիներից: Նա մարտնչել էր նաեւ Վանի, Շուշիի մատույցներում, կռվել էր Կովկասյան ռազմաճակատում, պարգևատրվել էր շքանշաններով: Իր մահկանացուն նա կնքեց Երևանում 1922-ին, 58 տարեկանում:

Ներկայացրեց Արեւիկ ՎԱՐՇԱՄՅԱՆԸ

1920 ՂԱՄԱՏԱՆԸ

դարձնում են առավել ներկայառկայի եւ հիշարժան: Եվ դա վկայությունն է նրա գրողարանագիտության ու մատենագիտության իմացությանը, ֆոնդերին, բաժնալին ներքին աշխատանքների մանրամասն ծանոթությանը:

Գնահատել եւ գնահատվել է: Այդ են վկայում տասնյակ պատվոգրերը, շնորհակալագրերն ու գովասանագրերը, նրա կուրծքը զարդադրող ՀՀ մշակութային նախարարության ոսկե, «Մովսես Խորենացի», «Հակոբ Մեղապարտ» մեդալները:

Իր ընտրած, իրեն տրված ճանապարհը, «ակնթարթը», որ կյանք է կոչվում, Ֆրոյստի դարձնում է բազմազան, լեցուն, արժանավայել, սա է Ջանջուղազյան մարդու գրավականը:

Երբ հաջողվում է օգտակար լինել կողքին, շրջապատին, ուրեմն նա իրեն երջանիկ է զգում, երջանկություն, որ հասույն է շատերին, քանի որ դա հոգու երջանկություն է:

Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հոդված-մտորում

Ընկուզենու տնկիներ աճեցնող
ծերունու խորագիտությամբ

Բոլորի համար տեսանելի են այն բացթողումները, որոնք մեր արվելուց հետո գարշապարի մասին են լիզեցնում մեզ ամեն անգամ, երբ առճակատում ենք իրականության հետ, այսինքն ամեն օր: Մեր ամենախոցելի տեղն այսօր ֆիզիկական, բարոյական եւ հոգեբանական առումներով բանակն է, մեզ ամեն գնով պաշտպանող այն ուժը, դեպի որը ուղղված է եւ պետք է ուղղված լինե՞ր մեր ամբողջ ուշադրությունը: Ստեղծում եւ օրեցօր վատթարացող տնտեսական վիճակը երկրում մնացողները կրել ու կրում են ներքին մի համոզմունքներով, որ իրենց զրկանքները իրաւամբ արդարացում են, որովհետեւ երկրի հիմնական միջոցները բանակի ամբարաններն են ուղղում: Մարդիկ, տասնեակ տարիներով առաւելները սեղմած, դիմացել են հաւատով, որ դժուարին օրերին իրենց գոհաբերությամբ Հայրենիքի վահանն են կռում... Երանի պարզում, որ յարգելի պատճառներով անվտանգությունից ելնելով, իրականությունը մեզ գիտակցաբար թիւր է ներկայացնում այսօր մեր չունեցած զենքի, մեր ժամկետանց տեխնիկայի մասին, եւ իրօք արդարացում լինեն մեր զրկանքները... Բայց կայ մի ոլորտ, որտեղ յստակ կարող ենք տեսնել, թէ ինչ է կատարում, եւ որտեղ կատարելիքները մեր գլխումը մեզ համար անհմատ կը դարձնի նաեւ բանակի գոյությունը, աւելին, ապագայ հզօր բանակի գոյությունը հինգ նրանից է կախում լինելու... Ոչ չի առարկի, որ հայության համար ամենակարեւոր մտահոգություններից մէկը պիտի լինի ժողովրդագրական գծապատկերում վերընթացի չգոյությունը: Դրան հակառակ պարտադիր չէ լինել վիճակագիր պատկերացնելու համար նոյն գծապատկերը մեզ հետ հակամարտող Ադրբեջանում եւ մեր դարաւոր անդամներ Թուրքիայում: Եթէ այսօր հպարտությամբ ենք նշում, թէ 150 հազար բնակչություն ունեցող Արցախը Հայաստանի օգնությամբ կարողանում է դիմագրաւել եւ ետ շարունակ անգամ վերջին տեխնիկայով զինուած մեծաքանակ թշնամուն, ապա վաղը դրանով հպարտանալու առիթ գուցէ այլեւս չունենանք, եթէ այսօր չանհանգստանանք բնակչության թուի կրկնապատկմամբ ու բազմապատկմամբ... Եթէ այսօր դեռ կարողանում ենք պարծենալ մեր ուղեղներով, որոնք փայլում են գիտության այնպիսի ոլորտներում, որոնց դժուար թէ մօտենան թուրքն ու ադրբեջանցին, ապա վաղը կը գգանք, որ սխալում ենք, որովհետեւ օրեցօր սրընթաց աւելանում են գիտության ու տեխնիկայի այն ոլորտները, որոնք առաջընթաց են արձանագրում ոչ թէ նոր գիտի, այլ կենցաղում եւ տեխնիկայի մէջ նորարարությունների կիրառման շնորհիւ: Բսկ այդպիսի առաջընթացին հասնելն ու առաջատար դիրք զբաղեցնելը ժամանակի խնդիր է ընդամենը: Եւ այս ենթապատկերին չենք ուզում զայիքում մեզ տեսնել ընկճուած մեր փոքր քանակի, մեր անընթացաբանության, մեր խնկճուած պատճառով... Մեր ուժը նաեւ մեր թուրքաբանակն է լինելու, ինչն էլ իր հերթին պիտի գուգահեռուի մարդու մէջ մարդու բարձր որակները դաստիարակելուն եւ նոր կառուցելիք հայրենիքում բարձր ու վեհ գաղափարների իրականացմանը... Հետաքրքիր մի առաջարկություն կարող է համոզել լինել թուրքաբանակի փոքրիկ հաշտարկով: Մենք, տնտեսագետ ու իրաւաբան չլինելով՝ չենք հասկնում համապատասխան հիմնաւորումներ ներկայացնել դրանք թողնելով նշած մասնագետներին: Վիճակագրական տուեալների կարիք էլ չկայ. անհրաժեշտութեան դէպքում անմիջապէս կարելի է ճշգրտել պատկերը: Բայց մօտաւոր թուրքով տեսանելի ու պարզորոշ կը դառնայ ասելիքի ուղղութիւնը: Գիտենք, որ Հայաստանում (Արցախի հետ միասին) տարեկան մօտաւորապէս 35 000 – 40 000 երեխայ է լոյս աշխարհ գալիս: Նաեւ գիտենք, որ մօտաւորապէս այդքան մի փոքր պակաս, քաղաքացի էլ հեռանում է կենսից: Միայն այսքան էլ բաւարար է հասկանալու, որ լաւատեսութեան հիմքեր չունենք: Եւ միայն այն հանգամանքը, որ տնտեսական անորոշ վիճակը թող չի տալիս նորաստեղծ ընտանիքներին ունենալ մէկից, կամ լաւագոյն դէպքում երկուսից աւելի երեխայ, արդէն ոչ միայն աճ չգրանցելով համեմբազանեւ քանից պահպանելու յոյս չի տալիս, այլեւ կրճատման վտանգի մասին է աղաղակում տասնամեակներով: Այս մասին նորություն չէ ասածը (վիճակագրական տուեալները հասանելի են բոլորին եւ խօսուն են առաւել): Կայ եւ աւելի վատթար, երբ ընտանիք կազմելու հեռանկարը յետաձգուած է անյայտ ու անորոշ ժամանակով: Պետությունը որոշակի քայլեր ձեռնարկում է՝ նորածինների համար ծնողներին խորհրդանշական գումար յատկացնելով: Սակայն դա քիչ է: Պետությունը թերեւս աւելին անել չի վիճակի չէ: Սակայն մենք ունենք



օրինակներ, որոնք խօսուն փաստեր են, որ այս ոլորտում ներդրուած իւրաքանչիւր դրամը ոչ միայն չի կորչում, այլեւ վերադառնում է բազմապատկուած ամուր եւ հզօր ընտանիքի տեսքով, դարձնական նոր սերնդի խտութեամբ, հոգեբանական ամուր յենարանի զգացողությամբ, առաւել մեծ հաւատով, որ մեզ արմատախիլ անել անհնար է... Սա նաեւ հակառակորդի համար կը լինի հոգեբանական ճնշում, որը հարկ եղած դէպքում կարող է արագօրէն վերածուել ուժայինի: Յարգանքի ու մեծարանքի արժանի բոլոր բարերարների կողքին սիրով, երախտագիտությամբ ու ակնածանքով ենք ամեն անգամ մտաբերում բարերար ու նուիրեալ Լեւոն Հայրապետեանին, որ իր բոլոր մեծ երախտիքների կողքին կարողացաւ նաեւ կազմակերպել այն եօթ հարիւր երիտասարդ զոյգերի անմոռանալի հարսանեաց հանդէսը, որոնք լուսաթեւ աղանիւնների պէս յոյսով, հաւատով ու սիրով էին լցրել Արցախի աշխարհն ու համայն հայության սիրտը, որոնք յաջող տարին նոյնքան նոր քաղաքացիներ էին պարգեւել Հայրենիքին, եւ ստեղծել այս անգամ արդէն 1400 զոյգերի դիմումների հոսքը կրկնելու հարսանեաց այդ ինքնատիպ ծէսը իրենց համար... Առաջին հարսանիքից ծնուած երեխաներով վեց տարի անց շուրջ քառասուն առաջին դասարաններ կազմուեցին: Սա երկրաչափական առաջատուութեամբ (պրոգրեսիայով) աճ ապահովող ընթացք է, որ ակնյայտօրէն գործում է: Նպաստելով, սակայն, եղած փաստերով հիացմունք ու ոգեւորություն արտայայտելը չէ միայն, այլեւ կառուցողական առաջարկություն անել: Շատ նուիրուած, հայրենասէր, ազնիւ սրտեր ունենք արտերկրում, որոնք անչափ շատ են ուզում օգնել հայրենիքին ուժեղանալ, հզօրանալ, անպարտ լինել... Սակայն յաճախ հիասթափություն ապրած հայորդիներ են նրանք, ինչպիսին էր Գալուստ Գիւլբենկեանը, ինչպիսին էր ինչ-որ տեղ նաեւ Քրք Քրքորեանը: Նրանք ցաւալիօրէն համոզուած են, որ իրենց աղբիւրի կենսատու ջուրը չի հասնելու հայրենիքի այն մարզերին, որոնց համար նախատեսուած էր... Բսկ եթէ նրանք համոզուած լինէին, որ իրենց աղբիւրը սրտացաւօրէն ջրամբարում է հրատապ ու անհրաժեշտ ուղղությամբ բացում հոսքով նպատակակէտին հասնելու, չէին վարանի... Կարծում ենք վաղուած ժամանակն է ներդրում կատարել յանուն ժողովրդագրական աճի: Դա այն ոլորտն է, ուր ներդրուած իւրաքանչիւր կարիքը մի ծիլ կարող է ապրեցնել, պահել հայրենիքում... Ուշք է ստեղծել դրամատուն, որտեղ արուած ներդրումներին, դրանց տեղաշարժներին հնարաւորություն կ'ունենայ հետեւել իւրաքանչիւր: Բանկը կը ղեկավարի ընտրուած ազնիւ տնօրէնների խորհուրդը: Այստեղ ամեն ինչ հասցեական է լինելու: Ծնուած իւրաքանչիւր երեխայի համար իր անունով հաշիւ է բացուելու դրամատունը: Եւ բոլոր երեխաները որոշակիօրէն ապահովուած կը լինեն, երբ չափաւաս դառնան: Թէ որքան գումար անհրաժեշտ կը լինի սկզբնական շրջանում, դժուար չէ հաշուել: Եթէ նոյնիսկ իւրաքանչիւրին տրուելիք գումարը 2000 դո-

լար լինի, առաջին տարում ծնունդ 35000 երեխաներին պետք կը լինի 70 միլիոն դոլար, որ մեծ գումար չէ գործարար հայերի այն տասնեակի համար, ովքեր ուզում են շոշափելի ու տեսանելի կերպով օգնել հայրենիքին: Իսկ եթե նրանց թիւը տասնեակը անցնի, աւելի մեծ կը լինի ծննդեան առթիւ իւրաքանչիւր երեխայի ստանալիք առաջին ընծան... Աւելորդ է ասել, որ դրամատուն լինելով, այն աշխատելու եւ տարեցտարի բազմապատկելու է նախնական այն գումարը, որ հաւաքում եւ կինի առաջին տարում: Եւ հետզհետեւ հզորացող դրամատունն ազատ կը լինի երեխաներին վերաբերող նոր ծրագրերի համար նոյնպէս յատկացնել գումար: Համոզում եմ, որ ամէն տարի նոր բարեարարներ կ'աւելանան... Սա ազգային դրամատուն կը լինի յատուկ ուղղորման ուղիով, հասցեական աշխատող, գումարների հոսքերը հսկող, որտեղից ոչ միայն ոչինչ չի կորչի, այլեւ վատահոլութեան հետ կը վերադարձուի մարդկայնությունը ի փառս հզոր հայրենիքի եւ յերախտագիտութիւն արժանապատիւ կենսով ապրող հոծ ու ստուար սերունդների: Օնոյների հոգսը մասամբ իր վրայ վերցնող այս բանկը, որ գրադուր եւ կինի երեխաների արժանապատիւ ներկան ու ապագան ապահովելով, բառի փոխաբերական եւ ուղիղ իմաստներով ծնող կը դառնայ ամէն տարի գրանցելով իր գաւակների թուաքանակի երկրաչափական պրոգրեսիայով (առաջատարութեամբ) աճը: Նրա ծնողական հայեացքից ոչ ոք դուրս չի մնայ: Եւ այլեւ չի լինի անվստահութիւն վաղուայ հանդէպ, այլեւ չի լինի արտահոսք երկրից, այլեւ գիւղերում չեն լինի տասնամեակներով երեխայի ձայն չլսած բակեր, չեն լինի կամ կը նուազեն պատճառները չորս, հինգ եւ աւելի երեխայ չունենալու համար, քանի որ բանկի տնօրէնների խորհուրդը հոգատարութիւն եւ ուշադրութիւն կը ցուցաբերի առաջ եկող խնդիրները հարթելու համար: Չեն լինի որբանոցում շաբաթուայ վեց օրը կիրակնօրեայ ընտանեկան ջերմութեանն անհամբերութեամբ սպասող եօթ հարազատ քոյր-եղբայրներ, որոնք այնտեղ են միայն այն պատճառով, որ արտագնայ աշխատանքի մեկնած հայրը Ռուսաստանում է, իսկ երիտասարդ մայրն ի գործ չէ միանգամից տասը երեխաների հոգսը քաշելու (սա իրական պատմութիւն է մէկը բազմաթիւ նման պատմութիւններից)... Չեն լինի բազմազան անապահով ծնողներ անարգական «ցնկներ» բառով արհամարհուած եւ ծաղրուած... Որովհետեւ հետզհետեւ կ'աւելանան բազմազան ապահովուած ընտանիքները, եթէ համոզուած լինեն, որ Աստուծոյ ողորմածութիւնից բացի, իսկ որ ճշգրիտ կը լինի ասել հենց այդ ողորմածութեամբ, իրենց ազգակից մեծ Մարդկանց համատեղ մեկնած ձեռքը մեծապէս օժանդակելու է իրենց: Իւրաքանչիւր յաջող երեխայի համար յատկացուող գումարի չափը կարող է կրկնապատկուել կամ էլ աւելի մեծանալ: Մի քիչ էլ երեւակայենք: Ենթադրենք, մինչեւ հինգերորդ նորածին երեխան կը մեծանայ, նրա աւագ

քոյր ու եղբայրները, ծնողներին օգնելով, կարող են չորրորդ երեխային տրուած գումարով ձեռք բերուած փոքրիկ ֆաբրիկայում նրան յատկացուած գումարով որեւէ գործ ձեռնարկել ու իրականացնել (գորգ գործել, կիրառական եւ դեկորատիւ արտեստի ինքնատիպ նմուշներ պատրաստել եւ այլն. այս մասին էլ կարելի է հոգ տանել ուղղորդելով բարեկամական խորհրդատուութեամբ), որը եկամուտի աղբիւր կը դառնայ ընտանիքի անդամներին ապահովելով աշխատատեղերով... Իսկ երրորդ երեխան (որը իւրաքանչիւր ամուսնական զոյգի իրական ներդրումն է բնակչութեան թուաքանակի աճի մեջ, քանի որ երկու երեխան դեռնու աշխուշումը, այլ լոկ ինքնավերարտադրումն է) տանը համարժէք գումար կը ստանայ... Գուցէ անիրական, խիստ երեւակայական է թուում այս ամէնը, գուցէ թերահաւատութեան առիթ է տալիս, սակայն ապրիլի քառօրեայ պատերազմը մեր շատ համոզմունքներ ջախջախեց ապացուցելով, որ մենք ունակ ենք կայծակնային արագութեամբ համախմբուելու եւ առիծների նման նետուելու սեփական հողի թիզը պաշտպանելու, միաժամանակ շատ բան ապացուցելու աշխարհին եւ հաւատարմութեան ու սիրանքի դասեր տալու... Թերահաւատութեան առնչութեամբ տեղին եկաւ մի պատմութիւն: Մի թագաւոր շքախմբով անցնելիս է լինում մի գիւղով եւ նկատում է տարիների ծանրությունից կորացած մի ծերունու, որը ինչ-որ տնկիներ էր աճեցնում: Մօտենալով հարցնում է, թէ ինչ է աճեցնում, եւ լսելով պատասխանը, թէ ընկուզենիներ, զարմանում է, յետոյ շքախմբով հանդերձ ծիծաղում, ապա հեզներով բացատրում, որ, ախր, այդ ընկուզենիները մի երկու տասնեակ տարի անց միայն բերք կը տան, ու ծերունին հաւանաբար այդպէս էլ դրանց բերքը չի տեսնելու: Ծերունին նոյն հանդարտութեամբ պատասխանում է, թէ թագաւորն ապրած կենայ, եթէ բոլորն այդպէս մտածէին, հիմա ընկուզենի չէր լինի... Պատասխանից հիացած թագաւորը հրամայում է իմաստուն ծերունուն մի քանկ ոսկի տալ: Քսակը վերցնելով ծերունին գոհունակութեամբ ասում է. «Ես իմ բերքն արդէն ստացայ»: Թագաւորն ապշում է ծերունու խորագիտութեամբ եւ հրամայում եւս մի քանկ ոսկի տալ նրան: Ծերունին վերցնելով խօսում է. «Արքայ, եւ առաջին տարում արդէն երկրորդ բերքն ստացայ»... Չենք ասի, թէ ամէն տարի կազմակերպուող հեռուստամարաթոնները խմելու ջրի, ճանապարհների, դպրոցների վերանորոգման եւ այլնի համար աւելորդ են, քաւ լիցի: Սակայն ու մ պետք կը լինի գիւղ հասած ջուրը, եթէ արդէն այնտեղ վազվզող մատուկների աղմուկը չլինի, որոնք տասնամեակներ առաջ երբեմն միասին կուծերը ուսած մեծ սիրով վազում էին դիմացի սարի աղբիւրը ջրի: Ու մ պետք կը լինի ճանապարհը, եթէ նրանով դպրոց շտապող մանկական շարքերը չլինեն, եւ ու մ պետք կը լինի այդժամ դպրոցի վերանորոգում չէնք...

Լուսինե ԱՄԵՏԻՍԵԱՆ (բանաստեղծ, գրականագետ, բ. գ. թ.)
եւ ծնողներ՝ Արարատ ԱՄԵՏԻՍԵԱՆ (ֆիզիկոս) Սիրա ՄԱՆՈՐԿԵԱՆ (ֆիզիկոս)

170 ԳՆԱՍ ԱՐԱԳԻԼ ՅԱՇՎԵԼՈՒ

ու առաջ անցնել: Ցավոք, դա վաղուց արդեն արմատացած մտայնություն է, մի ամբողջ սերնդի արյան բաղադրությունը, նրա մոլումների զսպաշապիկն ու համակերպումների օրենսգիրքը: Չէ ք հավատում: Այդ դեպքում մի պահ կանգ առեք ու ետ նայեք: Ինչ էք տեսնում ձեր թիկունքում: Չէ որ այնտեղ նույն այդ վերապահութեան հսկայական շղթան է իր բազում հանգույցներով ու ոլորմաներով: Չէ որ երեկվա մեջ գրեթէ ոչինչ չեղավ մեր ուզածի պէս: Մեզ միշտ սաստեցին. «Ոչ հիմա, այժմ դրա ժամանակը չէ», և մենք հնազանդվեցինք, որ սեփական ցանկությամբ չխախտենք մեկ ուրիշի ցանկության ընթացքը, հանկարծ մեր կամքից անկախ խոչընդոտ չդառնանք և չպահանջենք ավելին, քան սահմանված ու վիճակված էր մեզ համար: Ասացին հիմա պատերազմ է չի կարելի, հիմա ճգնաժամ է չի կարելի, անցումային շրջան է չի կարելի, ձմեռ է չի կարելի, հետո ամառ կլինի դարձյալ չի կարելի: Եվ ընդհանրապէս, չի կարելի ապրել այնպէս, ինչպէս ինքը եւ ուզում, որովհետեւ քեզից գորեղ մի բան էլ կա հանգամանքը, ու քեզ արտոնված չէ լինել նրանից կարևոր...

Եվ ահա այն օրը, երբ այդ գիտակից մարդը ցավակցող-կշտամբող հայացքով նայեց ինձ ու հարցրեց. «Հիմա դրա ժամանակն է», եւ

չցանկացա անպատասխան թողնել նրան: Ու այդ պահին վերստին ինձ օգնության եկավ պատմությունն արագիների մասին: Այո, հենց արագիների մասին, միայն թէ սա արդէն ուրիշ պատմություն էր, մի բան, որ կարողացել էի հին մամուլի տրցակները թերթելիս:

... 1944 թվականի գարուն: Պատերազմ: Հայաստան: Մարդիկ ապրում են տագնապների, կորուստների, թշվառության, քաղցի ճիւղաններում: Թերթերի էջերը լի են ռազմաճակատից եկող հաղորդումներով: Կարծես թէ ուրիշ ոչինչ չի կարող դրանից առավել էական ու կարևոր լինել: Եվ հանկարծ այդ հաղորդումների շարքում մի փոքրիկ լուր անմիջապէս ուշադրություն է գրավում: Հայաստանի Գիտությունների ակադեմիայի աշխատակիցները տեղեկացնում են, որ Արարատյան դաշտում կատարվել է արագիների հաշվառում և նրանց պահպանությունը գտնվում է իրենց հսկողության ներքո: Ապա մեկ ամս ակադեմիայում է, թէ որ հանդամասում քանի արագի է իջել և որ գյուղում քանիսն են քնավորվել...

Արագիներ բ: Սա ինչ բան է: Շուրջբոլորը գոյության կոնիվ է, ինչ արագիների մասին կարող է խոսք լինել: Եվ վերջապէս ու մ են պետք այդ արագիները, եթէ մարդկային կյանքն այլևս ոչինչ չարժէ, եթէ համընդ-

հանուր ցավը սրբում է իր ճանապարհին լուսավոր ու կենսատու ամեն ինչ և առաջին հերթին ապրելու կիրքը, վաղվա մեջ հույս փնտրելու շարժումնակ ջիղը... Իսկ մարդիկ գնացել էին նրանց հաշվելու՝ խորհելով դրա մասին, կամ, ավելի ճիշտ, խորհելով, սակայն գտնելով ոչ այն պատասխանը, որ գտել են այսօր. «Հիմա դրա ժամանակն է»...

Օնվեմ ծնվողի հետ, թաղվեմ թաղվողի հետ, ընկնեմ ու բարձրանամ ապրքաղի ու ոտքի կանգնողի հետ, որ դիտվեմ ներդաշնակ, համահունչ, միական: Իսկ երբ կարող եմ չլինել բոլորի պէս, այսինքն պարզապէս մի փոքր ապրեմ: Ոչ թէ անհնազանդ, այլ ինքնուրույն: Ոչ թէ հոսանքին հակառակ, այլ ինքս իմ հունով: Կարելի է: Թույլ տալիս եք:

Ձեր մատը փուշ մտնելիս իմ մատն էլ փուշ մի խրեք: Դրանից ձեր ցավը չի մեղմվի: Թողեք մատներս անփառ ժամ, որ կարողանամ ձեր փուշը հանել: Մի ասեք, թէ խախտում եմ ձեր միասնությունը, որովհետեւ այն, ինչ ասում եք, դեպի միօրինակություն տանող ուղենիշ է համատեղ լինելու անվան տակ: Իսկ միասնությունը միասնան լինելը չէ, զգացմունքի ու վարքի կոլեկտիվիզմը չէ: միասին ժպտում ենք, միասին արտասվում: Եթէ ինչ-որ մեկի ծիծաղն ու լացը չեն գալիս, ինչ եք անելու: Կարծիքը կփաթաթեք վզին և հետո կգարմանաք, թէ ինչու լ խելդովեց:

ՄՐՏԱՑԱՎ ՀՈՒՇԵՐ



Չնայած նրանք մշտապես մտապատկերիս մեջ են, բայց նրանց մասին գրել չէի մտածել: Այս հուշագրությունը Գլենդելից (ԱՄՆ) ինձ հուշեց «Համայնապատկեր» հաղորդի գլխավոր խմբագիր, բանաստեղծ, իմ մշտական բարեկամ Սարո Գյուրեգյան: Այս, գրական միավորումը մեզ մտերմացրեց, հարազատ զգացմունքներով լցրեց մեր էությունը, որովհետև գաղափարակից գրասերներ էին: Արխագահայ գրական միավորումը ստեղծելու նախաձեռնությունը պատկանում է Արշավիր Զիդարյանին, որը մինչ Հայրենական պատերազմը Սուխումում տպագրել էր երեք գիրք: Զիդարյանը հասավ նրան, որ 1959 թ. Սուխումում վերականգնվեց հայատառ տպարանը: Դա տեղի ունեցավ այսպես. Վրաստանի ղեկավար շրջանները դեմ էին, սակայն կուսակցության արխագահական մարզկոմի նորընտիր Առաջին քարտուղար Միխայիլ Թեմուրովիչ Բոլախանի ասաց. «Թող Թբիլիսին դեմ լինի, ես հայատառ տպարանը կվերականգնեմ Բյուրոյի որոշմամբ»: Այդպես էլ արեց: Բայց Վրաստանի կառավարությունը 1962 թ. հայկական հրատարակչությունը փակեց: Տպարանը նորից վերականգնելու մեր ջանքերը անցան անարդյունք: Բայց Վրաստանի գրադատարակչության Ղեկավար կոմիտեն միավորման մի քանի անդամների հրավիրեց Թբիլիսի: Մեզ լսեց կոմիտեի նախագահ Գարդաբեկյանը, հասկացավ մեր արդարացի, հիմնավորված պահանջը և գնաց ընդառաջ: Այնուհետև մեր ժողովածուները, որոնց խմբագիրը Հակոբ Չորանյանն էր, սկսեց տպագրել Թբիլիսիի «Մերանի» հրատարակչությունը: Քանի որ ես լրիվ տեղյակ էի մեր գրագրություններին, հանդիմանալով ժամանակ տասներկու թույլեքսնադատական եղույ՝ ունեցա: Չգիտեմ դա նպաստեց, որ իմ «Հուզաշխարհը»-ը Վրաստանի Կենտկոմի հրատարակչությունը տպագրեց արտահերթ, որը, հատկապես Նիկոլայ Դեմուրյանին, առերես վրդովեցրեց: Ինչևէ, մինչև վրաց-արխագահական պատերազմի սկիզբը արդեն տասներկու գրողներ գրքերի հեղինակներ էին: Սուխումում տպարանի գոյության երեք տարիների ընթացքում լույս տեսան միավորման անդամների «Մեծական այգաբաց» և «Շավիղ» ժողովածուները, Արշավիր Զիդարյանի «Ծովի շունչը» բանաստեղծությունների գիրքը, ինչպես նաև Անդրանիկ Բահարյանի, Իշխան Ռահմանյանի և Հակոբ Գուրուկյանի առաջին գրքույկները: Միավորման հովանավորները դարձան Վրաստանի գրողների Միության հայկական մասնաճյուղը և «Սովետական Վրաստան» թերթը: Այն տարիներին Թբիլիսում ձևաչափված գրողներ էին Վարդան Ատրյանը, Պահարեն, Օերուն Թորգոմյանը, Սուրեն Ավչյանը, Բենիկ Սեյրանյանը, Հովհաննես Կարայանը, Մկրտիչ Ասլանյանը, Մահակ Մանվելյանը, Մարտին Քարամյանը, Սոս Միմվորյանը, Կորյուն Ագոյանը, Վահան Գալֆայանը, Գևորգ Գրիգոր, Բատրակ Հայկը, Աղասի Այվազյանը: Նրանք բարյացակամ վերաբերմունք հանդես բերեցին արխագահայ կրտսեր գրչակից եղբայրներին նկատմամբ: 1957 թ. հրավիրեցին Թբիլիսի, տեղավորեցին հյուրանոցում, կազմակերպեցին էսկուսիա Ռուսթավիի մետալուրգիական գործարան, պատմության թանգարան, 95-րդ դպրոցում կայացավ գրական հանդիպում, «Սովետական Վրաստան»-ը մեր թոթովանքներից տպագրեց լրիվ մի էջ, որտեղ լույս տեսավ իմ «Գարնանային» առաջին ոտանավորը:

«Սովետական Վրաստան»-ը առաջին գրական էջը տպագրեց, որքան հիշում եմ, 1956 թ.: Կարդացի և սկսեցի մասնակցել միավորման պարապմունքներին: Հեղինակը կարդում էր իր նոր գրած ոտանավորը և ընկերները հայտնում էին իրենց կարծիքը, անաչառ դիտողություններ անում: Այն յուրատեսակ լաբորատորիա էր

բոլորիս համար: Գևորգ Ավջյանը արդեն բարեկամացել էր Գևորգ Էմինի հետ: Նրա աջակցությամբ էլ Երևանում լույս տեսավ «Գարնանային կանչ» առաջին գրքույկը, և չգիտեմ ինչու, Արշավիր Զիդարյանը թշնամացավ հեղինակի հետ: Ի դեպ ասեմ, որ Զիդարյանը Երևանի թատերական ինստիտուտում դասախոս եղած ժամանակ 1947 թ. «Գրական Թերթ»-ում Հովհաննես Շիրազի պոեզիայի մասին գրախոսական էր տպագրել «Երբ բանաստեղծը կտրվում է իրականությունից» վերնագրով: Այդ օրվանից Զիդարյանը դարձավ Շիրազի ռիսերմ թշնամի: Շիրազը սկսեց նրան անվանել Արշավիր Անջիգարյան: Բայց քանի որ տեղը եկավ, նաև ասեմ, որ ընդհանրապես Զիդարյանը արտառոց նախանձ անձնավորություն էր և չէր հանդուրժում, որ մեկն ու մեկը իրենից առաջ անցնի:

Գևորգ Էմինը մասնակցեց պարապմունքին և խոսեց արդի գրական կյանքից: Մի անգամ էլ եկավ «Պիոներ կանչ»-ի խմբագիր Վարդգես Պետրոսյանը: Նա ելույթ ունեցավ, ասաց, որ ժխտելով որևէ գրողի, կարելի է ավելի լավ գրական գործ ստեղծել: «Սովետական գրականություն» ամսագրի խմբագիր Ստեփան Կուրտիկյանը և նրա տեղակալ Ստեփան Ալաջաջյանը համարյա ամեն աշուն ամսագիրը բաժանորդագրելու նպատակով հանդիպում էին մեզ հետ: Մի տարի էլ ամսագիրը տպագրեց մեզանից մեկական բանաստեղծություն, իսկ ես ունեի երկու ոտանավոր, ինչ խոսք, Անդրանիկ Բահարյանին դա դուր չեկավ... որովհետև իրեն համարում էր ամենաառաջին բանաստեղծը: Հաճախ երևում էր Վահագն Կարենցը: Ջերմ էր հանդիպումը հատկապես Միլվա Կապուտիկյանի, Վահան Արամյանի, բանասիրական գիտությունների թեկնածու Ֆելիքս Բախչինյանի հետ, իսկ միավորման մշտական հյուրերն էին Վրաստանի հայ գրողներ Բենիկ Սեյրանյանը, Մկրտիչ Ասլանյանը, Մարտին Քարամյանը, մյուսները:

Բեկուժային եղավ արխագահայ գրական միավորման անդամների համար «Պիոներ կանչ»-ի գրականության բաժնի վարիչ, բանաստեղծ Սարո Գյուրեգյանի (Գյուրեգի) նպատակային այցը Սուխում: Մենք անմիջապես զգացինք, որ նրա ազգասիրական



զգացմունքները միայն Հայաստանով չեն սահմանափակվում. «Պիոներ կանչ» թերթում հաճախակի սկսեցին տպագրվել միավորման բանաստեղծները, հանդես եկան գրական էջերով: Պարզապես մենք ազատ շունչ քաշեցինք, ի դեպ իսկական հայրենասեր Սարո Գյուրեգյանի, «մոռացության դաշտից» դուրս եկանք գրական ապարեզ: Նույն ոգով Սարոն շարունակում է ընդառաջ գնալ համշխանահայերիս այն բանից հետո, երբ ստիպված եղավ բնակչության մեկնել Գլենդել և հրատարակել հայկական մամուլում նմանը չունեցող նկարագրող հոյակապ «Համայնապատկեր» հանդեսը: Եթե ոչ Սարո Գյուրեգյան, ապա էլ ոչ վ էր համշխանահայերի հետ հաշվի նստողը, ընդառաջ գնացողը, ընթերցողներին ներկայացնողը:

Փառք ու պատիվ համշխանահայերի անկեղծ բարեկամ Սարո Գյուրեգյան:

Երևանից հատուկ միավորում էր եկել անգուգական հայրենասեր, մեծ սրտի տեր Հովհաննես Մելքոնյանը: Նա հիմնել էր աշխարհում հայ գրողների Միություն: Գաղափարը հրապուրիչ էր և նպատակը հիմնավոր: Հրատարակեց նաև «Հայ գրող» գրական թերթ, իսկ շուտով արխագահայ գրական միավորման աչքի ընկնող գրասերները ստացան Միության անդամի վկայական: Հովհաննեսը մեզ հետ

230

միավորման հոգսերի մասին հարցազրույց անցկացրեց, որը, եթե չեմ սխալվում, տպագրվեց «Գրական թերթ»-ում: Ամիս չէր անցել, երբ «Խորհրդային Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայրուրթը ինձ հիշեցրեց այդ հարցազրույցի մասին և ասաց, որ Վրաստանի անկախության կոմիտեին նույնիսկ հայտնի է, թե ով է Սիրավան Սևունին... Շատ ավտոս, որ Հովհաննես Մելքոնյանը ավտովթարի գոհ դարձավ և անհրաժեշտ նախաձեռնությունը ժառանգորդում կախված:

Գրական միավորման լիաուժ անդամներից էր Հուսիկ Հարությունյանը: Սուխումի հայկական դպրոցի գործավարն էր: Գրում էր երգիծական կարճ պատմվածքներ, չափածո շարժեր:

«Սովետական Վրաստան» թերթի «Ուղիղ ճակատին» երգիծական խորագրի տակ 1958 թ. մարտի 26-ի համարում տպագրվեցին նրա ընկերական շարժերը՝ նվիրված միավորման անդամներին: Ինձ էլ էր «բաժին» հասել:

Սհա տեսնու մ եք,

Գործեր եմ տալիս,

Կամաց գնացեք,

Ես էլ եմ գալիս:

Իշխան և Հայկ Ռահանյան եղբայրներին էր վերաբերվում հետևյալ քառատողը.

Աղմուկը շատ է,

Իսկ գործը սակավ,

Հակառակն անել

Կաշխատենք, հարկավ:

Շեքելայի հայկական դպրոցի ուսուցիչ Վանիկ Սամվելյանը Գոյիվից անգուցական թարգմանություններ էր արել: Դա չվրիպեց Հուսիկի ուշադրությունից, գրեց.

Ես այսպես կանեմ,

Ես այնպես կանեմ,

Թե գործեր ունեք,

Բերեք թարգմանեմ:

Ինչպես Հուսիկ Հարությունյանը, այնպես էլ Վանիկ Սամվելյանը հետագայում տեղափոխվեցին Երևան: Վանիկը ապրում էր Սպանդարյան փողոցի թիվ 11 տանը, իսկ Հուսիկը՝ «Սևան» հյուրանոցում՝ քրոջ մոտ, որը բանասիրական գիտությունների դոկտորի կոչում ուներ: Համարյա ամեն օր Հուսիկի երգիծանքները հաղորդվում էին Երևանի քաղաքային ռադիոկայանով:

Միավորման կարող ուժերից էր Գարագուստ Գրիգորյանը: Աշխատում էր հրեաների հետ Սուխումի երկաթգծի առևտրի ցանցում և թափով բանաստեղծություններ ու պատմվածքներ էր գրում: Ռուս կնոջից ուներ երկու գավաթ: Ափսոս, 1968 թ. ամառը քաղցկեղից մահացավ:

Բանաստեղծություններ էր գրում նաև Գևորգ Շեկիկյանը և հայարտ էր, որ Ավետիք Իսահանյանի հետ խմբանկարում ինքը կար: Այստեղ ուզում եմ ցավով նշել, որ գրասենյակի պահոցը նրանց մահանալուց հետո հարազատները ցիրուցան են անում: Նման վիճակ է սպասվում նաև ինձ: Տիեզերագնացների նվերներով ստեղծել էի անձնական թանգարան, որը լայն արձագանք գտավ ամբողջ Ռուսաստանում, ունեմ ազգային իրականությունից հարուստ նմուշներ, լուսանկարներ, որոնք հարմարություն չունենալու պատճառով արկղներում իրենց «դար» են ապրում...

Ալեքսան Անտոնյանը և բանաստեղծ էր, և նկարիչ, մահանալուց հետո ոչինչ չի ժառանգել: Ուր էն Վովա Յայլյանի, Բշխան Ռահանյանի, Պետրոս Կարնեցյանի, Արշավիր Ջիդարյանի, Բարունակ Թողաթյանի, Անդրանիկ Ջեյթունյանի, Էմոք Շաշիկյանի և



մյուսների գրածները, գրադարանները, ստեղծած համշենական բառարանները, ժողովրդական ասացվածքները, հավաքած կենցաղային ամանեղենները: Ինչո՞ւ այդ մասին չեմ հոգում, այսպես կոչված, համայնքները: Պարզապես անհասկանալի է, թե նրանք ինչ ազգագույն գործ են կատարում: Ես արդեն հրատարակել եմ 21 գիրք, իսկ համայնքի ակտիվիստները նույնիսկ այդ մասին չգիտեն: Լազարևսկի գրադարանը առաջարկեց ազգային մշակույթների Կենտրոնում նշել իմ 80-ամյակը: Ես հրաժարվեցի, որովհետև առանց համայնքի մասնակցության անշուք, արտառոց բան կատարվեր: Ցավով պետք է արձանագրել, որ համարյա մեր բոլոր հարազատները, անգամ արյունակիցները ընդունակ չեն գնահատելու հոգևոր սրբությունները: Հաճախ եմ լսում. «Մեջք որ օգուտ չունես, ինչո՞ւ ես գրում կամ ում եմ պետք քո գրքերը, երբ մեռնես, պիտի այրենք...»:

Անցյալ դարի քսանական թվականներին Խարկովում, ուր բնակվում էր տաս հազար հայ, գործում էր երկու հայկական ակումբ: Ուկրաինացի դասական գրող Պավո Տիչինսկան (նաև մի որիշը, որի անունը մոռացել եմ) այդ ակումբներից մեկում, սովորել է հայերեն գրել ու կարդալ: Ինչո՞ւ մեր համայնքների խորհուրդները չեն մտածում նման ակումբներ հիմնելու մասին, որտեղ հնարավոր կլիներ կորստից փրկել կյանքից հեռացած գրողների գրական արժեքները: Այն կլինեք ազգի հոգևոր հարստությունը:

Գրագետ, բանիմաց ուսուցիչ էր Վահրամ Դավթյանը՝ համալսարանում բանաստեղծ Վահագն Դավթյանի կուրսեցին: Նա օժտված էր գրական երկը գրախոսելու բացառիկ ձիրքով: Դիպուկ առակագիրներ էին Պետրոս Կարնեցյանը, Սերգեյ Կոնդակյանը, Հարություն Ջիդարյանը, Արշավիր Գրեջյանը և Արամ Սպանյանը, իսկ Լևոն Դովաջյանի և Հովհաննես Թողաթյանի պոեզիան հազեցած էր զարնանային ծառ ու ծաղկի բույրով:

Հակոբ Գուրունյանը չափածոյից շուտով անցավ արձակին: Մեր գրական միավորման անդամներից ամենից շատ նա գրքեր տպագրեց, իսկ գաղտնիքը միայն ես գիտեի. համալսարանական կուրսեցին բանաստեղծ Միքայել Հարությունը աշխատում էր հրատարակչությունում և ընդառաջում էր: Գուրունյանը մանկագիր էր, պատմվածքները կենդանիների կյանքից էին կամ նվիրված էին Լենինին: Հաճախ մտքովս սարսափ էր անցնում, թե որ սովետը հանկարծ չլինի, ում եմ պետք Գուրունյանի գրքերը... Համենայնդեպ, Հակոբ Գուրունյանը մանկական հոգու տեր առաջնակարգ գրող էր: Աբխազական դպրոցի երկրորդ դասարանում տպագրված կային նրա երկու պատմվածքները, իսկ Հովհաննես Դավթյանի թարգմանությամբ Թբիլիսիում տպագրվել էր նաև վրացերեն լեզվով Գուրունյանի պատմվածքների ժողովածուն: Հակոբ Գուրունյանը սիրում էր Հայաստանը, վրաց-աբխազական պատերազմի ժամանակ գնացել էր Երևան և

այնտեղ էլ ծերունագարդ գրողը գտել էր իր մահկանացուն:

Երբ Սերո Խանգադյանը ինձ խնդրեց խմբագրել «Չայն համշենական» առաջին ժողովածուի բարբառային մասը, ես իմ կողմից նամակ գրեցի Սուխում Արտյոմ Կալայջյանին, որ նա ուղարկի Կարապետ Ջիհանյանի հերոսական կյանքի դրվագները: Տպագրվեց «Արյունոտ ճամփաներ» վերնագրով: Նման գրառուժներ Կալայջյանը շատ ուներ... Կորավ նաև լաբրացի բանահավաք Սարգիս Մեխայանի հարուստ պահոցը:

Անդրանիկ Բահարյանը տանջալից և անգործ ծերություն ունեցավ: 2016 թվի փետրվարի 14-ին կյանքից հեռացավ: Ինձ թվում է նրա մահը մի հախուռն դարաշրջան տարավ իր հետ:

Կյանքում ըմբոստ բնավորություն ուներ, բայց պոեզիան և արձակը խորաթափանց մեղմություն, հուզախո՞ղ քաղցրություն ունեին: Երբ Երևանում տպագրվեց նրա բանաստեղծությունների «Վտակ» խորագրով գրքույկը, ես համալսարանում ուսանող էի, «Սովետական դպրոց» թերթում մի փոքրիկ գրախոսական գրեցի: Ինչևէ, Բահարյան գրողի հանդեպ ես պարտք չեմացի: Աբխազահայերի «Համշեն» թերթի երկու էջերում տպագրեցի «Անդրանիկ Բահարյանի գրական աշխարհը» գրախոսականը և այն տեղավորեցի նաև «Նվիրումներ» գրքիս մեջ: Այստեղ նաև ասեմ, որ 1963 թ. Բահարյանը, Հայկ Ռահանյանը և ես մասնակցեցին Երևանում երիտասարդ հայ գրողների համագումարին: Դա իմ առաջին այցն էր Հայաստան: Չախ կողմս նստել էր Վաղարշակ Նորենցը, իսկ աջ կողմս Աշոտ Գրաշին, որոնց ստեղծագործություններին ես լավ ծանոթ էի:

Անդրանիկ Բահարյանի «Մայրիկ կկուն» մանկական պոեմը տպագրվել էր նաև աբխազերեն:

Արդեն շատերը իմացել էին, որ 66-ամյա Բշխան Ռահանյանը անբուժելի հիվանդ է: Գրական միավորման բոլոր անդամները նրան հարգում էին: Բշխանը հայրենասեր բանաստեղծ էր, Սուխումում հասցրեց տպագրել «Խաղաղություն» գրքույկը: Ես ևս առանձնակի հարգանք ունեմ նրա նկատմամբ: Մահվանից մեկ ամիս առաջ վերցրի մի շիշ հայկական կոնյակ և այցելեցի իրեն: Տրամաբանությունը բարձրացավ: Ցանկացանք միմյանց, ինչպես սովորաբար լինում է խմիչքի սեղանի շուրջը, առողջություն և «երկար» կյանք: Մահվանից խուսափել հնարավոր չեղավ: Թաղման օրը միշտ ձարպիկ Վովա Յայլյանը միացրել էր Արշավիր Ջիդարյանի 70-ամյակի ժամանակ Բշխանի հանգամանալից գեկուցումը հոբելյարի ստեղծագործությունների մասին: Այդ օրերին անվանի այձակագիր Բենիկ Մելքանյանը հանգստանում էր Պիցունդայում: Երբ իրեն հայտնեցի Բշխան Ռահանյանի մահվան մասին, ինձ տեղին դիտողություն արեց.

– Այ տղա, ինձ ինչո՞ւ չբերեցիք թաղմանը:

Ես մեղավոր էի, պարզապես մտքովս չէր անցել:

Բշխան Ռահանյանից ժառանգել Բարունակ Թողաթյանի ժողովածուներում տպագրված ժողովրդական առածներն ու ասացվածքները: Տասնյակ տարիներ հավաքած համշեներենի բառարանը, այդ թվում պահոցը, ինչպես նաև մյուսներինը, քոմուիտիզ եղավ:

Միավորման աչքի ընկնող արձակագիրներից էր խանդոցի (Ախալքալաք) Նիկոլայ Դեմուրյանը: Երկար տարիներ շինարար էր ածխագործների Տղվարչել

ՀԱՅՈՒ ԵՎ ՀԱՅՈՒ

«Անարարես» հրապարակությունը լույս է ընծայել Արմեն Պետրոսյանի «Հայը եւ աշխարհը» գիրքը: Ինչպես ներկայացված է գրքի անուարարչայում՝ «Գիրքը էսսենների ժողովածու է, որտեղ երբեմն լուրջ, երբեմն հումորով քննարկվում է ժամանակակից հայաստանի հայի կերպարը, նրա հարաբերություններն ազգակիցների, օտարների եւ ողջ փիեզերքի հետ, անցյալի ու ներկայի նկատմամբ ունեցած վերաբերմունքը եւ անազգայի իրադրական կամ ֆանտաստիկ հնարավորությունները»: Գիրքը բաղկացած է յոթ գլխից՝ «Հայի բախտ», «Հայը եւ սերը», «Հայը եւ հոգեւորը», «Հայը եւ անցյալը», «Հայը եւ հայը», «Հայը եւ ոչ հայը», «Հայը եւ ապագան»: Գրքի սկզբում բերվում են մի շարք հեղինակների՝ հայերին փված բնութագրեր: Հետեւում են հեղինակի էսսեները: Գիրքը մի տեսակ հայելի է, որի մեջ նայելով կարելի է ավելի լավ ճանաչել մեզ: Մենք գրողից հրավիրեցինք հեղինակին՝ բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ՊԱՍ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի եւ Մալաթիայի աշխարհակից Արմեն Պետրոսյանին:

— Այսպիսով, գրքում դուք փորձում եմք բնութագրել, ներկայացնել հայի կերպարը:

— Ոչ միայն բնութագրել, այլեւ հասկանալ, ինչը կօգնի ինքներս մեզ օգնելու հնարավորություններ փնտրելուն: Մեր հասարակությունը ծայրահեղ քաղաքականացված է, բոլոր խնդիրների լուծումները տեսնում են քաղաքական հարթության մեջ: Բայց այդպե՞ս է արդյոք: Ահա թե ինչ է ասել Թումանյանը. «Պետք է փոխվել»: Փոխությունը գալու է ներսից, եւ եթե չփոխվենք, լավ չի լինելու: Թումանյանից հետո մենք շատ ենք փոխվել, բայց առաջադիմելու համար դեռ շատ պիտի փոխվենք: Եվ մեր բոլոր խնդիրները չեն, որ կարող են լուծվել քաղաքական ճանապարհով:

Ես հաճախ օգտագործել եմ հումոր, որպեսզի հեշտությամբ մարսվեն որոշ դառը պատկերներ: Որոշ էսսեներում ներկայացված են գիտական փաստեր, որ դժվար կլինեն գտնել ոչ մասնագետի համար: Այս տեսակետից գիրքը նաեւ գիտամասնական է:

— Գիտական Արմեն Պետրոսյանն ինչպե՞ս որոշեց գրել կիսով չափ երգիծական, կիսով չափ ֆանտաստիկ, հիմնականում գիտության հետ քիչ առնչվող գիրք:

— Մասնավորապես արթնբարձր հրատարակում էի ոչ գիտական եւ երգիծական ստեղծագործություններ: Գիրքը դրանց շարունակությունն է երեւի: Բայց գրքում միտոսական, երգիծական, ֆանտաստիկ էսսեների կողքին կան նաեւ գիտական ու գիտականակերպ էսսեներ, գիտական ուսումնասիրության մի տեսակ պարոդիաներ: Նման ֆելիետոնները ես անվանում էի «չարածճի ուսումնասիրություններ»: Զգիտեմ այդ ժանրը եղել է այլուրեք, թե ոչ, բայց ես այդ ոճում ինձ լավ եմ զգում:

— Երբեմն չափազանց խիստ չէ՞ք քննադատությունը:

— Գրքում չկա ազգային սնապարծություն, չկա ներքողում, ինչը հաճախ է հանդիպում մեզանում: Ըստ Պարույր Սեւակի՝ ազգային սնապարծությունը ազգային ինքնասպանության ճանապարհն է: Իսկ Ստեփանյան ասել է, որ գիրքը հայելի է մեծ ճանապարհի վրա: Այնտեղ արտացոլվում են մեկ ջինջ երկինքը, մեկ ցեխն ու ջրափոսերը: Եվ դրա համար պետք է մեղադրել ոչ թե հայելուն կամ հայելին բռնողին, այլ ճանապարհը կամ ճանապարհային տեսլականը: Եթե գրքումդ միայն ջինջ երկինքն եւ արտացոլել, ուրեմն դու խաբում ես: Եթե չես ցույց տալիս մարդու եւ հասարակության խոցելի կողմերը, ուրեմն չես սիրում, չես ուզում որ նա աճի, զարգանա: Պետք է քննադատել՝ լինելով մարդու նկատմամբ սիրուց, որպեսզի նրա համար ավելի լավ լինի իր երկրում ապրելը: Եվ գիրքը գրված է սիրով: Այն կարելի

է գնել «Հայգիրք», «Բուկինիստ», «Բյուրոկրատ» եւ «Մետրո» գրախանութներում: Իսկ հիմա՝ մի ուրախ հատված գրքից:

ՀԱՅԻ ԲԱԽՏ. ՍԿԻԶԸ

«Պարզապես մեր բախտն ուրիշ է եղել...»
Պարույր ՍԵՎԱԿ

Աստված ստեղծեց մարդուն՝ Ադամին, ապա կնոջը՝ Եվային, ու բնակեցրեց նրանց Եդենում: Դա դրախտն էր, եւ Ադամն ու Եվան անդարդ, դրախտային կյանք էին վարում այնտեղ: Աստված որոշակի ցուցումներ էր տվել նրանց, թե ինչ եւ ինչպես, բայց նրանք վերին աստիճանի անլուրջ եւ անպատասխանատու գտնվեցին ու լսեցին սատանային, որն օժի կերպարանքով զբաղված էր իր մշտական գործունեությամբ՝ խանգարել Աստծու ստեղծագործական նախաձեռնություններին: Արդյունքում Ադամն ու Եվան կերան ինքնուրույն ծառի պտուղը եւ պարզեցին իրենց համար մի շարք նոր իրողություններ: Դատելով Աստվածաշնչի տեքստից՝ նրանց հատկապես դուր էին եկել ֆրոյդյան որոշ մանրամասներ, հենց այն, ինչը դուր չէր գալիս Աստծուն: Եվ Աստված դուրս հրավիրեց նրանց Եդենից: Ադամի եւ Եվայի սերունդը՝ մարդկությունը, դատապարտվեց չարաշ զոյության այլուրեք կյանքի ոչ դրախտային պայմաններում:

Աստվածաշունչն ունի նաեւ մարդածնության երկրորդ առասպելը: Աստված, հիասթափվելով Ադամի ու Եվայի բազմացած սերնդից, ջրհեղեղ է ուղարկում աշխարհ, որից փրկվում է միայն Նոյն իր ընտանիքով, Արարատ լեռան վրա: Այդտեղից է սկսվում մարդկության երկրորդ տարածումը:

Եդենի տեղադրությունը հայտնի է: Այնտեղ գետ էր հոսում, որից սկիզբ էին առնում չորս գետեր՝ Փսոն, Գեհոն, Տիգրիս եւ Եփրատ: Եթե առաջին եւ երկրորդ գետերի նույնացումը եւ տեղայնացումը կասկածներ է հարուցում, ապա վերջին երկուսի դեպքում ամեն ինչ պարզ է: Տիգրիսն ու Եփրատը, հայտնի բան է, սկիզբ են առնում Հայկական լեռնաշխարհից՝ պատմական Հայաստանից: Ուրեմն՝ մարդկության օրրանը՝ Եդենը կամ դրախտը, գտնվել է Հայաստանում:

Արարատ լեռը նույնպես գտնվում է Հայաստանում: Այն հնում նույնացվել է Հայկական լեռնաշխարհի հարավային Կորդվաց լեռան կամ Կորդվաց Արարատի, հետո՝ Մասիսի հետ: Ուրեմն՝ մարդկության երկու նախահայրենիքներն էլ, ըստ Աստվածաշնչի, գտնվել են Հայաստանում: Եվ հայերը հպարտությամբ են ասում՝ «Մայր Հայաստան, երկիր դրախտավայր»... Ահա եւ Խաչատուր Աբովյանի տողերը. «Մասիս առաջիս էր կանգնած միշտ, որ մատուղի ցույց էր տալիս, թե ինչ աշխարհի ծնունդն է եւ, դրախտը մտքումս էր կենդանի, որ ինձ երազում թե լուրջ միշտ մեր երկրի անունն ու պատվականությունը իմ առաջս էր բերում... Եվրոպա թե Ասիա՝ ինձ անդարդ ծեն էին տալիս, թե Հայկա զավակն էմ ես, Նոյան թոռը, էշմածնա որդին, դրախտի բնակիչը»:

Ուղղակի բաց տեքստով դեմ ենք դուրս գալիս Արարչին: Ահա եւ հայությանը պատուհասող դժբախտությունների պատճառը: Այ մարդ, ախր, պարզ ասված է, չէ՞. «Վեր կաց գնա այստեղից»: Բայց չէ, գոռով խցկվում ենք ու դեռ գլուխ գովում: Տեսնում ես, որ բոլորը, ի վերջո, չքվեցին գնացին տարբեր երկրներ՝ վրացիները՝ Վրաստան, ճապոնացիները՝ Ճապոնիա, մոզաբիկցիները՝ Մոզաբիկ: Եվ միայն հայերը մնացին տեղում: Պարզ չի, որ լավ չի լինելու:

Հայն ասում է՝ «Մեծին չսողի ոտքը քարին կանոն»: Եթե այդքան խելոք էիք, լսեիք, էլի, մեծերից մեծին, գնայիք այստեղից:

Եվ այսպես, հայի բախտը, ինչպես եւ բազում այլ իրողություններ մեզանում, բիբլիական արմատներ ունի:

Արմեն ՊԵՏՐՈՍՅԱՆ

240

քաղաքում: Հետո Սուխումում մենք հարևաններ եղանք: Հայրենական պատերազմի մասնակից էր, զորում էր հյուրեղ կարճ պատվածքներ: Տպագրեց հայերեն ու ռուսերեն մի քանի գրքեր: Կյանքում օբյեկտիվ անձնավորություն էր: Երբ Վրաստանի կոմկուսակցության Արխանգալսկ մարզկոմի Բյուրոն ինքնավար հանրապետությունում հաստատեց ինձ «Սովետական Վրաստան» թերթի սեփական թղթակից, Նիկոլայը միակն էր գրական միավորման անդամներից, որ ասաց.

— Վերջապես ճշմարտությունը հաղթեց: Դեմուրյանը նկատի ուներ միավորման մասնակիցներից մի քանիսին, որոնք չունենալով լրագրողական կրթություն ու կյանքում ոչ մի թղթակցություն չտպագրած, հավակնում էին տիրանալ այդ պատվավոր նունակաւորային պաշտոնին:

Նիկոլայ Դեմուրյանի չորս որդիները բնակվում էին Մոսկվայում: Հերթական անգամ գնաց Մոսկվա, Կուրսկի կայարանում իջավ գնացքից ու 78 տարեկան առույգ տղամարդը ընկավ...

Համեստ ու լուրջ գրող էր նաև Խաժակ Միմոնյանը, իսկ Ազատ Գրիգորյանի մահը մեծ կորուստ էր Մոչիի գրական միավորման համար: Մինչև օրս ցավով ենք հիշում կյանքից հեռացած Անդրանիկ Մարեցյանին, Առաքել Մինասյանին, Մաշա Մկրտչյանին, Նիկոլայ Օհանյանին, Կիրիլը Միզովյանին, որոնք բանաստեղծական գոհարներ էին ստեղծում:

Բանաստեղծ Աշոտ Քոչկոնյանի վաստակը կայանում է նրանում, որ բարբառով գրած նրա պոեմները մասամբ անդառնալի կորստից փրկեցին համշենի բարբառը, իսկ Աղյերում բնակվող Անդրանիկ Զեյնուլյանի գիտական աշխատությունները՝ հայերի ու հայոց լեզվի ծագման մասին բարձր գնահատեցին Հայաստանի լեզվաբանները:

Ախր, ո՞ր մեկի վաստակը հիշես: Նրանք գնացին, սրտացավ հուշերը մնացին:

Սիրական ՍԵՎՈՒՆԻ, լրագրող
ՍՍՀՄ ժուռնալիստների Միության անդամ

Իմ շատ սիրելի ՀԱՅ ժողովուրդ, այս ճակատագրական դաժան օրերին ուզում եմ հիշեցնել մեր ՄԵԾ բանաստեղծ Գևորգ Էմինի «Սիամանթոյի մենախոսությունը» բանաստեղծությունը, որի համար տնային կալանք էին տվել նրան:

Գևորգ ԷՄԻՆ

«Սիամանթոյի մենախոսությունը»

- 1915 թիվ, ապրիլ, Այա2 -

1.

- Ո՛վ հղացավ
այս միտքը դիվական՝
Մասիսը ճերմակ,
Մասիսը անբիծ
Այս լայն աշխարհում
դնել այն տեղում,
Ուր դար ու դարեր
Պիտի արյունեն լանջերը նրա
Եվ գազաթն անգամ.
Ո՛վ միտք հղացավ
Դժոխք արարել
Եղյալ ու չեղյալ
Դրախտի տեղում,
Արարատ լեռան
հովանու ներքո,
Երկրի փոխարեն
Մեզ տալով մի հին,
Ոտնակոխ ճամփա,
Չողի տեղ՝ չոր քար,
Ձրի տեղ՝ արյուն...
Ո՛վ միտք հղացավ,
Դեռ մեր պատմության
վաղ արշալույսին,
Այս արարչագործ,
Հին ժողովրդի
Գլուխը դնել մի հարևանի
(Բիրտ Պարսկաստանի)
Արևոտ սրի տակ.
Մյուսի աջով -
(Բյուզանդիո խաչով),
Պահանջելով,
Որ նա... ծախի իր հոգին,
Եթե ուզում է... մարմինը փրկել:
Եվ եթե դարերն
Անգոր են եղել նրան ազատել,
Եվ եթե
Գալիք դարերն անգոր են
ազատել նրան
Եվ հրաշքն է լոկ
Հնարն անհնար, -
Տե՛ր,
Տուր ինձ Մովսես
մարգարեի պես
Հանել ու տանել
ցեղն իմ հալածված
Այս Հայաստանից, -
Ոչ-Մահաստանից,
Ոչ-Քարաստանից,
Դեպի ապահով,
ուրիշ մի եզերք
(Կա՛ն արդյալի տեղ...) -
Ցեղն իմ մշտատն -
Նրա սերմը նոր
Արմատները հին,
Վեպ, կոթող ու երգ...
Տուր պերճաբանիս
Թվատությունը նրա մոգական
Եվ սուրը նրա՝
Աղբյուր հանելու

հանդիպած քարից,
Եվ գավազանը՝
Ճեղքելու Կարմիր ծովը
մեր բախտի,
Լացի ու արյան,
Թեկուզն Մովսես
մարգարեի պես
Իմ մահը գտնեմ,
Օտար հող մտնեմ,
Այդ երանելի ափին չհասած,
Բաղձալի սեմին
նրա փակ դռան...
Տե՛ր,
Չե՛ս լսում դու
«Կարմիր լուրերը»
ջարդի ու արյան...

2.

Ձեռքովս է,
Կորչում,
Իմ ազնիվ սերմը,
Տեսակն ու սեռը.
Եվ ինչպե՛ս մար,
Ինչպե՛ս ու դիմանար.
Երբ մենք, թվով՝ քիչ,
Մակայն եզակի որակ ենք եղել,
Քանակի աշխարհ...
Նետ ու աղեղի
փոխարեն՝ տավիղ
Եվ գիր ենք պաշտել
սրի փոխարեն
Եվ զենքի տեղ՝ երգ,
Զորքի տեղ՝ ցնորք -
Ձենքի, գորքի
ու բանակի աշխարհ...
Մենք՝ մարդկության
ու պատմության դուռը
Ամեն մի դարի
Արդար պայքարին
Արյուն ենք տվել,
Արյունը մեր քիչ,
Արյունը մեր թանկ.
Դրա փոխարեն
Մեզ գովք շռայլող
Թանաքի աշխարհ...
Ինչքան ել դժվար,
Հաճախ՝ անհնար,
Բայց, ինչ էլ լինեք,
Միշտ մարդ ենք եղել
Ու մարդ մնացել -
Տմարդի աշխարհ.
Եղել ձիք, տաղանդ,
Երբ վսեմ տաղանդն
Աղանդ է կոչվել,
Աղանդի աշխարհ.
Նվիրվել բարուն ու
գաղափարին -
Նեղ կաղապարի
Ու... չարի աշխարհ.
Երկրպագել
ու խնկարկել միայն
Ներշնչումի

ու արարման պահին -
Փողի, օգուտի
Ու շահի աշխարհ...
Ձեռքովս է,
Կորչում իմ ազնիվ սերմը,
Տեսակն ու սեռը,
Իմ անկրկնելի ցեղը հայկական.
Քսանդրոդ դար,
Եվ դ՛ու, մարդկություն,
Որ,
Իբրև բարի,
Եվ հոգատար
ու խղճով ես այնքան,
Որ պահպանում ես
Ու փրկում մահից
Նույնիսկ գորշ գայլի
Կամ շնագայլի տոհմ ու
ցեղերին,
Ամեն տեսակի
Գիշատիչներին
ցեղի մարդկային,
(Օձից մինչև... Կայեն...)
Մտքո՛ւ ցեղն իմ
"Կարմիր գրքի" մեջ...
Բայց ոչ չ, սպասի ը...
Հենց այդ գրքում եր--
